

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՄ ԱՐՏ ՇԻՆ»

ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵԺԱՍԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԹԵԺԱԳԵՏ ՏԵՂԱՄԱՍԻ ՆԵՖԵԼԻՆԱՅԻՆ
ՄԻԵՆԻՏՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
2022-2025ԹԹ. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ՏՆՕՐԵՆ՝

Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1.Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	4
1.2.Նախատեսվող գործունեության բնութագիրը	14
1.3.Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	16
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	19
2.1. Գտնվելու վայրը	19
2.2. Ռելիեֆ, երկրաձևաբանություն	22
2.3. Շրջանի կլիման	35
2.4. Մթնոլորտային օդ	37
2.5. Ջրային ռեսուրսներ	43
2.6. Հողեր	58
2.7. Բուսական և կենդանական աշխարհ	60
2.8.Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	68
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	91
3.1. Ենթակառուցվածքներ	91
3.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	94
3.3. Պատմության, մշակութային հուշարձաններ	98
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	102
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	106
Օգտագործված գրականության ցանկ	119

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեժասարի Նեֆելինային սիենիտների հանքավայրի Թեժագետի տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության (երկրաբանահետախուզական) աշխատանքների ծրագիրը կազմված է ըստ «Ամ Արտ Շին» ՍՊ ընկերության երկրաբանական առաջադրանքի:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձորի համայնքի Թեժասարի նեֆելինային սիենիտները երկար ժամանակ արդյունաբերական հետաքրքրություն չեն

ներկայացրել: Մինչդեռ անցած դարի 40-50 ական թվականներին, կապված նեֆելինային սիենիտներից այլումինի օքսիդի ստացման տեխնոլոգիայի հաջող լուծման հետ, վերջիններս դարձել են առավել մանրամասն ուսումնասիրման առարկա: ԽՍՀՄ Կառավարության հանձնարարությամբ 1949թ. հայկական երկրաբանության վարչությունը կատարել է նեֆելինային սիենիտների մանրամասն հետախուզում, իսկ Հանրապետության Գիտությունների ակադեմիայի քիմիայի ինստիտուտն իրականացրել է նեֆելինային սիենիտներից այլումինի օքսիդի և այլ արտադրատեսակների ստացման տեխնոլոգիայի փորձարկումներ լաբորատոր խոշոր մասշտաբներով: Մեր հանրապետությունում առաջին հետազոտությունները հիմք հանդիսացան առանձնացնելու նեֆելինով հարստացած նեֆելինային սիենիտների տեղամասեր, կատարելու երկրաբանահետախուզական աշխատանքներ:

Տնտեսության մեջ առաջարկվող տեխնոլոգիայով նշված հումքի օգտագործման արդյունավետությունը հիմնավորված է եղել Հայկական ՍՍՀ-ի գիտությունների ակադեմիայի Էկոնոմիկայի և քիմիայի ինստիտուտների կողմից: Այս ամենի հիման վրա ընդունվել է որոշում՝ այլումինի օքսիդի և կողմնակի արտադրատեսակների արտադրության համար նեֆելինային սիենիտների արդյունաբերական օգտագործման վերաբերյալ: 1958 թվականին Հայաստանի կառավարությունը ԽՍՀՄ Պետպլան է ներկայացրել տեխնիկա-տնտեսական զեկույց նեֆելինային սիենիտների արդյունաբերական օգտագործման արդյունավետության մասին: Ընդունվող որոշումների գիտական խորհրդատվությունը իրականացվել է ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի ակադեմիկոս Մ. Գ. Մանվելյանի կողմից: Այդուհանդերձ այլումինի օքսիդի ստացման փորձնական տեղակայման կառուցվածքը և մասշտաբները հնարավորություն չեն տվել ամբողջությամբ մոդելավորելու արդյունաբերական համակարգը: Ամբողջական փակ շղթայով այս գործընթացը կիսագործարանային պայմաններում չի վերարտադրվել:

Արտադրության նշված հումքի ապահովման նպատակով Թեժասարի հանքավայրի Տակյարիի տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարները հետախուզվել և հաստատված է եղել ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին կից Պաշարների Պետական Հանձնաժողովի կողմից՝ 1959 թվականի փետրվարի 17-ին /արձանագրություն N 2597/ A₂+B+C₁, կարգերով ընդհանուրը՝ 92 միլիոն 615 հազար տոննայի չափով: Նշված պաշարները կապահովելին նաժագծվելիք Հրազդանի Լեռնա-քիմիական կոմբինատի գործունեությունը երկար ժամանակ:

Թեժասարի հանքավայրի Թեժագետի Նեֆելինային սիենիտների երկրաբանական վերջին հաշվետվությանը կազմված 1957-1958 թթ իրականացված հետախուզական աշխատանքների արդյունքներով, ներառել են նաև պաշարների հաշվարկ: Այն նույնպես հաստատվել է ԽՍՀՄ Կառավարությանը կից ՊՊՀ-ում արդեն 1959թ. դեկտեմբերի 29-ին /արձանագրություն 2918/: Հանքավայրի Թեժագետ այս տեղամասը, նախկինում հետախուզված և պաշարները հաստատված նույն հանքավայրի Տակյարիի տեղամասի համեմատ, որը լեռնատեխնիկական և տրանսպորտային պայմաններով գտնվում է առավել բարենպաստ պայմաններում, ՀՍՍՀ մինիստրների խորհրդի 1957թ. հունվարի 8-ի N 172 որոշմամբ դիտարկվել է որպես առաջնահերթ արդյունաբերական յուրացման տեղամաս, իսկ Տակյարիի հաստատված պաշարներով տեղամասի շահագործումը դրանով դուրս է թողնվել նրա պաշարները համարել են ոչ հաշվեկշռային: Ինչպես նշված է ՊՊՀ արձանագրության մեջ, Թեժագետի տեղամասը դիտարկվում է որպես տարեկան մեկ միլիոն տոննա

արտադրողականությամբ նախագծվող Հրագրանի լեռնաքիմիական կոմբինատի հումքային բազա: Տեղամասում հետախուզվել էր հանքային գոտի՝ մակերեսը 0.83քառ. կմ/: Նմուշներում հիմնական կոմպոնենտների պարունակությունը տատանվում է լայն սահմաններում, իսկ նմուշների գերակշռող մասսայում սիլիկահողը կազմում է 54-58%, ալյումինի օքսիդը՝ 19-23%, նատրիումի և կալիումի օքսիդների գումարը՝ 11-14%:

ԽՍՀՄ մինիստրների խորհրդին կից օգտակար հանածոների պաշարների Պետական հանձնաժողովի 1959թ. XII 29-ի նիստի N2918 արձանագրության որոշման մասի 1-ին կետով ՊՊՀ-ը Թեժագետի տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների հաշվարկում կատարել է որոշ փոփոխություններ:

Պաշարների հաշվարկը սահմանափակել է նախագծվելիք բաց հանքի մշակման ներքին հորիզոնով՝ 2360մ, ճիշտ է համարել ձեռնպահ մնալու այդ հորիզոնից ցածր C₁ և C₂ կարգով պաշարների, ինչպես նաև ծայրային X-X կտրվածքից դեպի արևմուտք էքստրապոլիրացված C₂ կարգի պաշարների հաստատումից: Ճիշտ է համարել նաև գալիումի պաշարի հանումը պաշարների հաշվարկից:

Հանձնաժողովը հաստատել է Թեժասարի հանքավայրի Թեժագետի տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարները համաձայն ներկա որոշման 1 կետից բխած վերահաշվարկից 1959թ. հունվարի 1-ի դրությամբ հետևյալ քանակություններով /ըստ կարգերի/

	Չափի միավորը	A ₂	B	C ₁
Հանքաքարի պաշարները	Հազ. S	30901	103151	230498
Ալյումինի օքսիդի միջին պարունակությունը	%	21.68	21.68	21.77
Սիլիկահողի պարունակությունը	%	56.3	56.34	56.53
Նատրիումի և կալիումի օքսիդների գումարային պարունակությունը	5	12.85	12.87	12.61

Ըստ մասշտաբների, հանքաքարի տեղադրվածության, հիմնական կոմպոնենտների բաշխվածության բնութագրի, Թեժասարի հանքավայրի նեֆելինային սիենիտների Թեժագետի տեղամասը վերագրել է ալյումինի հումքի հանքավայրերի «ա» խմբին:

Հանձնաժողովը միաժամանակ Հայկական ՍՍՀ Մինիստրի Խորհրդին կից Երկրաբանության և ընդերքի պահպանության վարչության ուշադրությունը հրավիրել է մի շարք խնդիրների վրա, որոնց առավել մանրամասն անդրադարձ կկատարվի հետագա

գլուխներում, հանքավայրի հետախուզման մեթոդիկայի ու արդյունքների վերլուծության բաժնում:

Այդուհանդերձ երկրաբանահետախուզական ոչ լրիվ ամբողջական տվյալների, հումքի վերամշակման արդյունավետ ու փորձարկված տեխնոլոգիաներ հետագայում ձեռք բերելու ակնկալիքով 1960-ական թվականների սկզբին Հայաստանում սկիզբ դրվեց լեռնաքիմիական արդյունաբերության արտադրական և օժանդակ օբյեկտների կառուցմանը, հիմքում ունենալով Թեժագետի տեղամասի նեֆելինային սիենիտների համալիր օգտագործումը: Առաջին հերթին կառուցվեցին կոմունիկացիոն հիմնական հանգույցները, ճանապարհներ, երկաթուղային գծեր ու կայարաններ, էլեկտրաէներգիայի արտադրության հզորություններ, գազամատակարարման համակարգեր և այլն: Չուտ արտադրանք թողարկելու արտադրական հիմնական օբյեկտներից ամենաձավալուն աշխատանքները կատարվել էին ցեմենտի արտադրության համար նախատեսված օբյեկտների կառուցներում, արտադրական հանգույցների միջև ճանապարհների շինարարության և տեխնոլոգիական վերամշակման արտադրական մակերեսների ստեղծման օբյեկտներում: Կոմբինատի ցեմենտի արտադրության արտադրամասը գործարկման է հանձնվել 1970 թվականին տարեկան 1200 հազար տոննա արտադրողականությամբ, ընդ որում օգտագործվող հումքը և մյուս կոմպոնենտները հայթայթվել են հանրապետության այլ հանքավայրերից: Համալիրում ներառված Թեժագետի տեղամասից հանքաքարի հանույթ կազմակերպելու համար սկսվել էին էներգոմատակարարման, որոշ օժանդակ շինությունների, նախագծվող բաց հանքին մոտենալու ճանապարհների կառուցման աշխատանքները: Հրագրան քաղաքում իրականացվել են սոցիալական նշանակության շատ օբյեկտների կառուցում: Մինչդեռ կոմբինատի շինարարության երկարատևությունը հանգեցրել էր կոմբինատի կառուցման նախահաշվի թանկացման կապված բանվորական գծագրերի հաճախակի փոփոխությունների, բարոյապես մաշված սարքավորումները փոխելու, անպիտան ու անօգտագործելի դարձած շինարարական կառույցների և դրանց էլեմենտների վերականգման, ինչպես նաև համալիրի կառույցներում ֆինանսական նոր հաշվարկներում լրացուցիչ, նոր օբյեկտների շինարարություն նախատեսելու անհրաժեշտության հետ: Այս ամենը ձգվել է մինչև 1977 թվականը, որից հետո կառուցված արտադրական մակերեսները և ենթակառուցվածքները ղեկավար բարձր մարմինների կողմից նպատակահարմար է համարվել օգտագործելու Հրագրանում ռադիոարդյունաբերության սարքաշինական նոր համալիրի ստեղծման համար:

Ինչպես նախկինում, այնպես էլ ներկա ծրագրով հետախուզական փորվածքներ չեն նախատեսվել գետի ափամերձ տարածքում, չնայած նախկինում հաշվարկված պաշարների ուրվագիծը ընդգրկում է նաև գետի ափամերձ տարածքները:

Հաշվի առնելով հանքահումքային ռեսուրսների արդյունավետ և ամբողջական օգտագործման ժամանակակից տենդենցները, ինչպես նաև, որ դրանց սպառումը ամենուր անշեղորեն աճում է, իսկ հումքի տեսակների օգտագործումը բազմազան է դարձել ու մշտապես նույնպես աճում է դրա պահանջարկը, մեր ընկերությունը նպատակահարմար ու

արդյունավետ է համարել կրկին անդրադառնալ Թեժագետի տեղամասի նեֆելինային սիենիտների համալիր ուսումնասիրության խնդրին:

Նկատի ունենալով, որ ներկայում մեծապես կատարելագործված են ինչպես օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման տեսությունն ու մեթոդները, այնպես էլ հանքավայրերի շահագործման, հանքաքարերի համալիր վերամշակման տեխնոլոգիաները՝ նպատակահարմար է գտել ամբողջությամբ վերլուծել ավելի քան 60 տարի առաջ Թեժագետի տեղամասի պաշարների հաստատման ժամանակ ինչպես նաև մյուս փորձագիտական վերլուծությունների ընթացքում փորձագետների դիտողություններն ու առաջարկները, կազմել տեղամասի լրացուցիչ հետախուզման ու ուսումնասիրությունների ծրագիր: Խնդիր է դրվել վավերացնել ու նոր իրականացվելիք երկրաբանա-հետախուզական, աշխատանքների հանքաքարի վերամշակման տեխնոլոգիաների ճշտման ու վերլուծական աշխատանքների արդյունքներով վերանայել տեղամասի պաշարների հաշվարկման համար ընդունված կոնդիցիաները, քանի որ դրանք սահմանված է եղել տարիներ առաջ, ոչ շուկայական չափանիշներով, այն ժամանակների տեխնիկա-տնտեսական արդյունավետության հաշվարկի համաձայն: Ելնելով հանքարդյունաբերությունում ժամանակակից տեխնիկայի, հումքի հանույթի և վերամշակման տեխնոլոգիայի կիրառման հնարավորություններից՝ կկատարվի նեֆելինային սիենիտների և օգտակար մյուս հանածոների պաշարների նոր հաշվարկ ու վերագնահատման արդյունքները կներկայացվի ընդերքաբանական նոր փորձաքննության:

Տեղամասի նեֆելինային սիենիտների վերահաշվարկված պաշարները ամբողջական պատասխան կտան ինչպես տրադիցիոն հիմնական կոմպոնենտների, այնպես էլ առանձնապես հազվագյուտ ու ցրված տարրերի և մասնավորապես հազվագյուտ հողածին խմբի էլեմենտների վերաբերյալ: Կճշտվեն նեֆելինային սիենիտների վերամշակման տեխնոլոգիան: Միայն վերը նշված աշխատանքները կատարելուց հետո ստացված արդյունքներով կազմված երկրաբանական նոր հաշվետվության ու վերահաշվարկված ընդերքաբանական փորձաքննության արդյունքներով հաստատված պաշարների հիման վրա հնարավոր կլինի նորովի գնահատել տեղամասի տեխնիկատնտեսական հնարավորությունները, որի հիման վրա էլ հնարավորություն կստեղծվի հայց ներկայացնելու և կազմելու Թեժագետի տեղամասի նեֆելինային սիենիտների արդյունահանման նախագիծ:

Երկրաբանական ուսումնասիրության 2021-2025թթ. Ներկա ծրագրով նախատեսվող մոտ 91.74 հա մակերեսով տարածքը մինչ 2022թ. դեկտեմբեր գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի համայնքի, իսկ ներկայում Ծաղկաձոր խոշորացված համայնքի տարածքում, Մեղրաձոր գյուղից հյուսիս արևմուտք: Ի տարբերություն նախկինում հաշվարկված պաշարների շրջագծի ներկա ծրագրով պաշարները վերագնահատման անհրաժեշտ նոր երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու ուսումնասիրության տարածքը կազմված է երկու հատվածից կապված 1959թ. դեկտեմբերի 29-ին Միութենական Կառավարությանը կից Պաշարների Պետական Հանձնաժողովի կողմից Թեժագետի տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների հաստատման արձանագրության 10-րդ կետի պահանջներից: Դրանում նշվում է, որ պաշարների բլոկների շրջագծումը կատարվել է առանց հաշվի առնելու հետագայում բաց մշակման հանքի խորությունը: Հանձնաժողովը աննպատակահարմար է գտել պաշարների հաշվեկշռում ընդգրկել Թեժագետ գետի մակարդակից ցածր հաշվարկված պաշարները և արձանագրության որոշման մասի 1-ին կետի

a) ենթակետով ճիշտ է գտել պաշարները հաստատել միայն գրունտային ջրերի մակարդակից վերև տեղակայված հատվածի համար

Ներկա ուսումնասիրության ծրագրում ընդգրկված ուսումնասիրության երկու հատվածների առկայությունը կապված է նախկինում հաստատված պաշարների տեղակայման իրավիճակից: Պաշարների վերագնահատմանը անհրաժեշտ նոր կոնդիցիաների ընդունումից հետո անհրաժեշտություն է առաջանալու վերանայելու նաև հանքային մարմնի ուրվագծումը: Կախված մինիմալ արդյունաբերական ընդունված միջին պարունակությունից նախկինում հաստատված շրջագծի սահմանը կարող է մեծանալ և միայն կոնդիցիոնից ցածր համարված միջին պարունակության սահմանում այն կուրվագծվի: Այս պահանջից ելնելով տեղամասի արևելյան, Թեժագետ գետի ձախ ափի, հատվածում նախատեսված հետախուզագծերում նախկինում հաշվարկված շրջագծից փոքր չափով երկարեցվել է հետախուզման ենթակա տարածքը:


Այն սահմանափակվում է հետևյալ կորդինատներով ըստ ARMWGS-84 համակարգի:

1-	8467748.4635	4502538.3530
2-	8467569.3478	4502578.1250
3-	8467522.6613	4502727.3470
4-	8467611.5636	4502991.8175
5-	8467777.4322	4503076.8863
6-	8467890.1955	4503229.1986
7-	8468089.8401	4503296.9917
8-	8468209.7187	4503513.6715
9-	8468533.3800	4503690.5504
10-	8468755.3162	4503706.6939
11-	8468865.3822	4503563.8629
12-	8468715.1657	4503394.2921
13-	8467263.0344	4502413.9098
14-	8467138.1340	4502304.7672
15-	8466585.3945	4502609.1484
16-	8466000.8706	4502591.3616
17-	8465963.7525	4502625.4482
18-	8466033.8111	4502959.6270
19-	8466635.6698	4502832.5799
20-	8467078.1119	4502544.5958
21-	8467180.2874	4502611.8820

$$33.00 + 58.74 = 91.74 \text{ հա}$$

.Ու ս ու մ ն ս ս ի թ յ ան տարածքի իրավիճակային հատակագիծ հարակից տարածքներով՝ համապատասխան նշագրումներով՝

ԵՐԿՐԱԲԱՆԱՅԵՏԱՆՈՒՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՏԱՐ ՀԱՅՑԿՈՂ ՏԱՐԱԾՔ



1-	8467748.4635	4502538.3530
2-	8467569.3478	4502578.1250
3-	8467522.6613	4502727.3470
4-	8467611.5636	4502991.8175
5-	8467777.4322	4503076.8863
6-	8467890.1955	4503229.1986
7-	8468089.8401	4503296.9917
8-	8468209.7187	4503513.6715
9-	8468533.3800	4503690.5504
10-	8468755.3162	4503706.6939
11-	8468865.3822	4503563.8629
12-	8468715.1657	4503394.2921
13-	8467263.0344	4502413.9098
14-	8467138.1340	4502304.7672
15-	8466585.3945	4502609.1484
16-	8466000.8706	4502591.3616
17-	8465963.7525	4502625.4482
18-	8466033.8111	4502959.6270
19-	8466635.6698	4502832.5799
20-	8467078.1119	4502544.5958
21-	8467180.2874	4502611.8820

33.00 + 58.74 = 91.74 հա


Գեղեղցիստ՝ Է Վիրաբյան

ՎԿԱՅԱԿԱՆ հ. 0220

'21' ՍԱՐՏ 2022թ

Թեժագետի տեղամասի 2022-2025թթ. երկրաբանական ուսումնասիրության տարածքի հատակագիծ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



- Մերձաձորի ոռոգ. հանքավայր
- 1. շ/հ-27
- 2. շ/ա-1
- Լախիկնու մացած մակերևութային և ներային լճեր/վանդակներ
- Լախիկնու հաշվարկված և հաստատված պաշարներ
- Լախիկնու փորվածքներ.
- 1. հորատանցքեր
- 2. հետախուզահորեր
- 3. հին հետախուզատուներ, որոնք ենթակա են վերականգնման վերանուշարկման
- 4. Խրամներ
- Երկրաբանատեխնոլոգիական աշխատանքների համար հայցվող տարածք

Իրավիճակային հատակագիծը հարակից տարածքներով էլ պայմանական նշաններով՝ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Հայտում լրացուցիչ ներկայացվում է երկրորդ իրավիճակային հատակագիծը (էջ)՝ ներառելով շրջապատող բնակավայրերը նշագրումներով: Բացի նախկինում ներկայացված Մեղրաձոր, Փյունիկ, Արտավազ գյուղերի հեռավորությունների վերաբերյալ տվյալների, նոր հատակագծում տրված են Կորչլու գյուղի հեռավորությունը՝ հայցվող տարածքից հարավ է 6.5կմ, Մարմարիկ գյուղը դեպի հարավ-արևելք 10կմ, Աղավնաձոր բնակավայրը դեպի հարավ-արևելք՝ 11կմ, Հանքավան բնակավայրը դեպի արևմուտք 11.5կմ, Ծաղկաձոր խոշորացված համայնքի կենտրոնը դեպի հարավ-արևելք 16.0կմ: Տարածքում շահագործվող Մեղրաձորի ոսկու հանքի հեռավորությունը տարածքից դեպի հարավ է 5կմ, դրանից արդյունահանվող հանքաքարի վերամշակման հարստացուցիչ ֆաբրիկան դեպի հարավ-արևելք է 5.5կմ: Հատակագծում տրված է նաև տարածքում առկա բոլոր ջրային ռեսուրսների տեղակայման տվյալները: Ուսումնասիրության ենթակա տարածքից 6կմ հարավ հեռավորությամբ հյուսիս-արևմուտքից դեպի հարավ արևելք հոսում է Մարմարիկ գետը, որը Հրազդան գետին է միանում Հրազդան քաղաք չհասած հատվածում և հայցվող ուսումնասիրության տարածքից հեռու է 17կմ:

Մարմարիկ գետի Մարմարիկ ջրամբարը հայցվող տարածքից գտնվում է դեպի հարավ-արևմուտք 7.5կմ հեռավորության վրա: Մարմարիկ գետի Մեղրաձոր վտակի Թեժագետ գետակ-վտակը Մեղրաձոր վտակին է միանում հայցվող տարածքից դեպի հարավ-արևելք 4կմ հեռավորության հատվածում: Մեղրաձոր վտակը Մարմարիկ գետին է միանում տարածքից դեպի հարավ-արևելք 8 կմ հեռավորության վրա: Թեժագետ գետակի վերին հոսքի ավազանը, ինչպես մանրամասն տրված է ՀՍՍՀ Մինիստրերի Խորհրդին կից երկրաբանության և ընդերքի վարչության Մեղրաձորի երկրաբանական արշավախմբի կողմից 1957-1958թթ. Թեժագետ տեղամասում իրականացված մանրամասն երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքներով երկրաբաններ Յ.Մ. Այվազյանի և Ռ. Ա. Մկրտչյանի կողմից պաշարների հաշվարկով կազմված երկրաբանական հաշվետվության 162-168 էջերում /Հայաստանի երկրաբանական ֆոնդ գույք N0394 27.01.1960թ./ առանձնանում է խիստ մասնատված ռելիեֆով և ապարների յուրահատուկ լիթոլոգիկ կազմով, որոնք բերել են ապարների փոքր ջրակայունություն:

Թեժագետ գետակի աջ և ձախ վտակների ջրահավաք ավազանները սնվում են տարածքի փոքր աղբյուրներից: Գետակի աջ վտակը անցնում է ուսումնասիրության հայցվող երկու առանձին՝ „Արևմտյան,» և „Արևելյան,» տարածքների միջնամասով, յուրաքանչյուր առանձին տարածքի սահմանագծից 160-ից 250մ հեռավորությամբ: Այդ վտակը սկիզբ է առնում հայցվող տարածքներից մոտ 3 կմ հյուսիս գտնվող Թեժլեռ լեռան լանջերից: Գետակի մյուս՝ ձախ վտակը սկիզբ է առնում նույն լեռան արևելյան լանջերից, հոսում հայցվող „Արևելյան,» տարածքի արևելյան հատվածով դեպի հարավ, երկրաբանական ուսումնասիրության ենթակա տարածքից 0.5-1.5կմ հեռավորության վրա՝ ըստ հորիզոնի 100-ից 250մ նիշ ներքին հատվածով: Թեժագետ գետակի երկու աջ և ձախ վտակները իրար միանում են երկրաբանական ուսումնասիրության ենթակա հարավային սահմանից հարավ-արևելք 1.5կմ հեռավորության վրա: Երկու վտակների սնուցումը կատարվում է փոքր աղբյուրների ջրերից, վտակների ջրի ծախսի մաքսիմումը լինում է հուլիսին /1.6 և 3.5 խմ/վրկ համապատասխանաբար/ մինիմումը՝ դեկտեմբերին /0.02 և 0.04 խմ/վրկ համապատասխանաբար/:

Ինչպես արձանագրել են ժամանակին ուսումնասիրություններ կատարած մասնագետները նեֆելինային սիենիտների հանքաշերտը պրակտիկապես ջրագուրկ է: Գրունտաջրեր դրանցում չեն առաջացնում կայուն ջրաբեր հորիզոններ: Չնայած տեղանքի գրունտային ջրերը որևէ ազդեցություն չէին կարող ունենալ հանքավայրի հետագա շահագործմանը, այդուհանդերձ ԽՍՀՄ Մինիստրերի Խորհրդին կից պաշարների Պետական Հանձնաժողովը /ք. Մոսկվա/ 1959թ. դեկտեմբերին Թեժագետ տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների հաստատման ժամանակ ՀՍՍՀ երկրաբանական վարչության կողմից ներկայացված պաշարների հաշվարկի ներկայացված ծավալները սահմանափակել է Թեժագետ գետակի հոսքի մակարդակի հորիզոնով՝ 2360մ նիշով և ներկայացված պաշարների հաշվարկից հանել այդ հորիզոնից ներքև C₁ և C₂ կարգերով հաստատված պաշարները /Արձ. N2918, 29.12.1959, էջ 9, ՀԵՖ-0394/:

Ներկա ուսումնասիրության նախագծով կազմված երկրաբանահետախուզական աշխատանքները ոչ միայն սահմանափակվել են 2360մ նիշի հորիզոնով, այլև աշխատանքները նախատեսվել են միայն 2400մ նիշից բարձր հատվածներում: Այսպես, „Արևմտյան,» տեղամասի հատվածում Թեժագետ գետակի աջ վտակի հոսքից մակերեսին 0.5-0.8մ խորության փորվածք է նախատեսվել 250 գծ.մ հեռավորության վրա, գետակի հոսքից 50մ ավելի բարձր հորիզոնի վրա: Ուսումնասիրության „Արևելյան,» տեղամասում տեղակայված

հետախուզափորվածքները գետակի հոսքի ավազանից հեռու են 160-200 գծ.մ հեռավորության վրա, գետակի հոսքի հորիզոնից բարձր՝ 30-50մ հորիզոնի վրա: Մակերևութից անցած բոլոր փորվածքները փաստագրումից ու նմուշարկումից հետո ռեկուլտիվացվելու են, բերվելու նախկին տեսքի:

Ներկա փուլում իրականացվող երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը չի նախատեսում ամբողջությամբ վերականգնել նախկինում անցած բոլոր փորվածքները: Ի նկատի է առնվել խուսափելու վերականգնումները ջրային առվակների մոտակայքերում, անգամ ձորակներում, որտեղ կարող են հեղեղումների ժամանակ առվակներ առաջանալ:

Քանի որ հորատվելիք ապարները ջրակայուն են և համարյա ջրի կորուստներ չեն լինում, հորատման գործիքների հովացման ժամանակ նախատեսվում է հորատման ռեժիմում նախատեսել ջրի ամբողջական շրջանառու օգտագործումը: Հորատման յուրաքանչյուր հրապարակում ունենալով ջրի տարողություններ, ջրավազային պարզեցում իրականացնելու համար:

Ինչպես նշված է ուսումնասիրության ծրագրում, Թեժագետ տեղամասի նեֆելինային սիենիտների հանքային դաշտը ունի պարզ երկրաբանական կառուցվածք և ըստ բարդության դասվում է 2-րդ խմբի հանքավայրերի դասին: Նախկինում հաշվարկված պաշարները մորֆոլոգիապես ունեցել են պարզ կառուցվածք: Շտոկվերգային հանքային մարմին 200-400մ լայնությամբ, 1500-2500մ երկարությամբ և 250-400մ խորությամբ (գուգահեռանիստ պրիզմայի տեսք): Այն, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում, նախատեսվում է ուսումնասիրել ոչ խիտ, այլ նոսր հետախուզագծերով 180-200մ հեռավորությամբ A կարգի պաշարների համար, մինչև 400մ B կարգի և մինչև 600մ C1 կարգի պաշարների համար: Ինչպես հետախուզման արդյունավետության և որակական ցուցանիշների, այնպես էլ հետագայում պաշարների վերահաշվարկի ժամանակ էական նշանակություն ունենա ներկայում նախատեսված փորվածքների տեղակայման վայրի 20-60մ փոփոխությունը, եթե առաջանա դրա անհրաժեշտությունը կապված ջրային ավազանին մոտ չլինելու պահանջից: Ներկա ուսումնասիրություններն ավելի շուտ ոչ թե ծավալների ճշտմանն է ուղղված, այլև լաբորատոր և վերլուծական աշխատանքների համար նմուշների առավել մանրակրկիտ և բազմակողմանի ուսումնասիրությանը:

Միաժամանակ Հայտնում եմ, որ ըկերությունը 2022 թվականի հուլիսի 7-ին իր՝ 12-0118 գրությամբ լրացուցիչ դիմել է ՀՀ Կադաստրի կոմիտե՝ Ձեր կողմից նշված թիվ 07-0145-1191-0001 ծածկագրով անտառային հողերի վերաբերյալ լրացուցիչ տվյալներ ստանալու համար:


ՀՀ Կադատորի կոմիտեից 2022 թվականի հուլիսի 8-ին ստացվել է թիվ ԱՏ-08072022-07-0227 պատասխանը, որում նշված է, որ տվյալ ծածկագրով հողամասը գյուղատնտեսական նշանակության այլ հող է: Կից ներկայացվում է ստացված գրությունը:

Բացի այդ տեղեկացնում եմ, որ տեսողական դիտարկումներով հայցվող ամբողջ տարածքում բացակայում է անտառային ծածկույթը, ծառաթփային բուսականությունը:

Միաժամանակ հայտնում եմ, որ ամբողջ տարածքում աշխատանքները կիրականացվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Երկրաբանահետախուզական աշխատանքների ներկա ծրագրի նպատակն է նախորդ տարիների աշխատանքի արդյունքները հաշվի առնելով, ինչպես նաև օգտագործելով տարբեր կոմպենտենտ մարմիններում դրանք էքսպերտային ուսումնասիրության եզրակացությունները, որոնք մանրամասն ներկայացված են սույն աշխատանքի նախորդ գլխում, կազմել լրացուցիչ աշխատանքների նոր մեթոդիկա, ստանալ բոլոր անհրաժեշտ տվյալները տեղամասի պաշարների վերահաշվարկման ու նոր ընդերքաբանական եզրակացություն այն ներկայացնելու համար: Հանքային տեղամասի լրացուցիչ հետախուզման մեթոդիկայի ընտրությունը կատարելուց հեղինակները ճիշտ և արդյունավետ են համարել նախկինում ընտրված նեֆելինով հարուստ նեֆելինային և կեղծ լեյցիտային սիենիտների տարածմանը խաչաձև հետախուզագծերով, ընտրված դրանցում տեղակայելով մագիստրալային հետապուզաառուներ շուրֆեր և հորատանցքեր :



Լրացուցիչ հետախուզման և հետազոտությունների արդյունքներով կկազմվի 1:2000 մասշտաբի երկրաբանական նոր քարտեզ՝ ընդգրկելով միայն Թեժագետի տեղամասը:

Հետախուզման այս փուլում աշխատանքները կտարվեն որակական առավել բարձր պահանջներով, ամբողջությամբ կատարելով նախորդ աշխատանքների արդյունքների վերլուծությունների եզրակացությունները:

Նախատեսվում են ամբողջությամբ վերականգնել տեղամասում 1950-ական փվականների վերջում անցած բոլոր մագիստրալային հետախուզումները՝ ընդհանուր 3140 գծամետր ծավալով և 19 շուրֆերը: Նախատեսվում է նոր 15 շուրֆերի անցում, ինչպես նաև 2010 գծմ հորատանցքերի հորատում: Բացի այդ նախատեսվում է տեղամասի տարբեր երկուական տեղամասերից անցնել ոչ մեծ երկարության խարաներ /յուրաքանչյուրը 5.0 մ երկարության և 2.0x4.5 մ մակերեսով/ փորձնական հանույթի միջոցով ստանալ 500տ հանքանյութ, տեխնոլոգիական նմուշին անհրաժեշտ նյութեղեն հումք ստանալու համար: Աղյուսակում տրված է նախատեսվող աշխատանքների ֆիզիկական ծավալներն ըստ տեսակների և տեղակայման վայրերի / 1/

Ներկա ծրագրով նախատեսված լրացուցիչ և վերագնահատողական իրականացման արդյունքները հնարավորություն կտան տեղամասերի վերաբերյալ ստանալու երկրաբանական, տեխնոլոգիական և տնտեսական հիմնավորված ավարտուն գնահատականներ:

Կճշտվեն տեղամասերի երկրաբանական կառուցվածքները, դրանց ընդհանուր չափերը և սահմանագծերը:

Լրացուցիչ հետախուզման այս փուլի 2022-2025թթ. ծրագրի իրագործման արդյունքներով կկազմվի տեղամասերի տեխնիկատնտեսական զեկույց:

Կազմված հաշվետվությունը կներկայացվի ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ընդերքաբանական փորձաքննության համար:

1.3. Նախագծման նորմատիվ-իրավական հենքը

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու

գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի թիվ 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը,
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակեղևամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները,
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N 138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը,
- ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N 533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:
- ՀՀ բնապահպանության նախարարի 24,12,2012թ 365-Ն հրամանը ուժը կորցրած է ճանաչվել 07,01,2022թ 6-Ն հրամանով,
- Թափոնների մասին ՀՀ Օրենքը,

- ՀՀ կառավարության 15.06.2017թ 676-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 18.08.2021թ. N1352-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 21.10.2021թ-ի N1733-Ն որոշումը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Գտնվելու վայրը

Թեժասարի Նեֆելինային սիենիտների հանքավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում Մեղրաձոր գյուղի մոտ: Հանքավայրը մարզկենտրոն Հրազդան քաղաքի հետ կապված է 26կմ երկարությամբ ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով: Թեժագետի տեղամասը Մեղրաձոր գյուղի հետ կապված է 7կմ երկարության ավտոճանապարհով:

Մոտակա գյուղերն են Մեղրաձորը, որը գտնվում է հայցվող տարածքից մոտ 6կմ հարավ-արևելք, Փյունիկ գյուղը՝ 5կմ հարավ և Արտավազ գյուղը՝ մոտ 5կմ հարավ-արևմուտք:

Կոտայքի մարզի Հրազդանի շրջանը տեղակայված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում: Շրջանով է անցնում միջպետական ավտոճանապարհներ, երկաթգիծ, որը շրջանը կապում է ինչպես Երևանի, այնպես էլ հարևան երկրների հետ: Հրազդան շրջկենտրոնից ոչ շատ հեռու հոսում է Հրազդան գետը, որը սկիզբ է առնում Սևանա լճից և թափվում Արաքս գետը:

Շրջանի տարածքում Հրազդան գետն են թափվում 4 գետեր, դրանցից գլխավորը և հանքային տեղամասին մոտը Մարմարիկ գետն է , որը ունի մի քանի փոքր վտակներ: Նշված գետային ցանցը սնվում է մակերեսային և աղբյուրի ջրերից, ունեն բավականին ելքեր և կարող են հետագայում ծառայել ինչպես կենցաղային այնպես էլ արտադրական նշանակության ջրի պահանջներին: Հանքավայրի շրջանը հարուստ է քաղցրահամ խմելու ջրով, շինարարական նյութերով, տուֆեր , գրանիտներ, և բազալտ: Հանքավայրին մոտ գործում է Մեղրաձորի ոսկու հանքավայրը շահագործող ձեռնարկություն, տեղում վերամշակում է նաև արդյունահանված հանքաքարը:

Անտառային մասսիվը տեղակայված է սարերի հյուսիսային լանջերում և ներկայացված են կաղնու, լորենու, կաղամախու, կեչու և այլ ծառատեսակներով:

Նեֆելինային սիենիտների Թեժասարի հանքավայրը վերաբերվում է Փամբակի լեռնաշղթայի հարավային լեռնաճյուղավորման կենտրոնական մասին, աստիճանաբար այստեղ անցնելով Մարմարիկ գետի հովիտ:

Թեժասար լեռան գագաթը հավասար է 3101 մետրի և տեղամասի ամենաբարձր գագաթն է: Տարածքի ամենացածր կետը 1830.5մ է, որտեղ Թեժագետ գետը թափվում է Մարմարիկ գետը: Շրջանը բնութագրվում է տիպիկ լեռնային կլիմայով, առատ մթնոլորտային տեղումներով և քամիների առկայությամբ: Միջին տարեկան տեղումները կազմում են 911մմ, ամենաշատը ապրիլ և մայիս ամիսներին նվազագույնը օգոստոսին և սեպտեմբերին: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը +4.9 աստիճան է:

Շրջանի սահմաններում տիպիկ լեռնային հովիտ առաջացնում է Մարմարիկ գետը, որն ունի ձորակի թեքություն արևելքից արևմուտք:


Նկար 1.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ KOTAYK MARZ



Մարզկենտրոնը ՀՐԱԶԴԱՆ
7 քաղաք, 61 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը՝ 264կմ
HRAZDAN the center
7 cities 61 settlements
Instate roads 264 km

ԵՐԿՐԱԲԱՆԱՅԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՀԱՅՑԿՈՂ ՏԱՐԱԾՔ



-Ուսումնասիրության տարածքի իրավիճակային հատակագիծ

2.2. Ուելիեֆ, երկրաձևաբանություն

Թեժասարի հանքավայրի շրջանը համապատասխանում է բարդ երկրաբանական կառուցվածք ունեցող տարածքների դասին: Նկարագրվող շրջանի մակերեսի մեծ մասը ծածկված է հրաբխածին և մետամորֆային ապարներով: Ոչ մեծ տեղամասով է ներկայացված նստվածքային առաջացումները: Շրջանը առանձնանում է խիստ բարդ տեկտոնական կառուցվածքով: Բնութագրական է, որ շրջանի կառուցվածքում ամբողջությամբ բացակայում է վերին և ներքին պելեոզոյը, ինչպես նաև ներքին և միջին մեզոզոյը:

- Ապարները և դրանց ստատեգրաֆիան

Հանքային շրջանի երկրաբանական կտրվածքը շարադրվել է մի շարք հեղինակների ուսումնասիրությունների արդյունքներով և ներկայացնում հետևյալ կերպ.

Քեմբր-մինչքեմբր-Շրջանի առավել վաղեմի ապարները ներկայացված է քեմբր մինչքեմբրի բյորեդացված թերթաքարերով /տարբեր կազմի/, որոնք ըստ հզորության անկայուն են և տարածվում են մարմասների շերտերով: Փամբակի և Ծագծղկունյան

մետամորֆիկ հաստաշերտը ըստ Ա.Տ. Ասլանյանի բաժանված է երեք սվիտայի. Արգաքանյան, Միսխանյան, Ապարանյան:

Ըստ հեղինակների ներկայում կարելի է խոսել դրանց մինչպոլեոզոյան հասակի մասին /վերին պրոտերոզոյ-ներքին պալեոզոյ/ Հայաստանի առավել վաղեմի, հին ապարները ներառյալ Հանքավանի և Թեժասարի հանքավայրերը:

Կավիճ բյուրեղացված թերթաքարերի վրա նստած է վերին կավձի նստվածքները:

Վերին տուրան-ներքին կոնյակ: Այս հասակի առաջացումները տեղակայված են Մարմարիկ գյուղից հարավ-արևելք և համանուն գետի ձախ վտակների վերին հատվածներում: Դրանք ներկայացված են մերգելացված ավազաճաքերով, կավայնացված թերթաքարերով: Մարմարիկ գետի վերին հատվածում հաստաշերտի հզորությունը հասնում է 250 մետրի, որից 200 մետրը հասնում է ավազա-թերթաքարային սվիտային:

Սենոն Փամբակի լեռնաշղթայի արևմտյան մասում առաջացածները հանդես են գալիս Արսպակար, Շողակետ լեռնագագաթների և Գալլավար, Դալար և Մարմարիկ գետերի ավազանի մասսիվում: Այս սվիտայի հզորությունը Թեժասարի մասիվի շրջանում տատանվում է 60-ից 120-350 մետրի:

Էոցեն Դրանց առաջացումները ներկայացված են հրաբխածին և նստվածքային առաջացումներով: Վ. Ն. Կոսյարը առանձնացնում է չորս ստրատեգրաֆիկ հորիզոններ.

Վերին միոցեն – այս առաջացումները մեծ տարածում ունեն Հանքավանի հանքավայրում, Ծաղկունյանցի լեռնաշղթայում: Հորիզոնի հզորությունը տատանվում է 150-200մ: Առավել վերև տեղակայված է տուֆոբրեկելային ապարների հզոր շերտ, որն ունի առավելապես անցեզիտային կազմ:

Չորրորդական առաջացումներ- ներկայացված են անդեզիտ-դացիտային տիպի տարբեր լավաներով. հրաբխային տուֆեր, ալուվյալ դելուվյալ առաջացումներով:

Թեժասարի հանքավայրում այս առաջացումներն ունեն շատ աննշան տարածում: Հանքավայրում արմատական ապարները հիմնականում մերկացված են և միայն Թեժագետ գետի աջ ափին ոչ մեծ մակերեսով դրանց հզորությունը հասնում է 2-3մ:

Ինտրուզիվ ապարներ -Թեժասարի հանքավայրի շրջանում մեծ տարածում ունեն ինտրուզիվ ապարները; Դրանք շատ տարբեր տեսակների են ինչպես պետրոգրաֆիկ կազմով, այնպես էլ ըստ ժամանակի տեղակայման:

Ալկալային ինտրուզիաներ – Գլխավոր ելքը տեղակայված է Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջում, Ուլյաշին, Թեժագետ, Տալլարի գետերի ավազանում և մասնակիորեն Տանձուտ և Աղստրև գետերի հարավային վտակների ավազանում: Ալկալային ապարների համալիրը զբաղեցնում է մոտ 65 քառ. կմ մակերես; Այս կոմպլեքսի խառնրագույն ինտրուզիվը- Թեժասարի մասսիվն է: Նրա առաջատար տիպի ապարները հանդիսանում են ալկալային սիոնիտները, նեֆելինային սիոնիտները, կեղծ լեյցիտային սիենիտները և մի քանի երակային ապարներ: Մասսիվի կենտրոնական մասում գերակայում է ալկալային սիոնիտները, որոնք եզրամասերում անցնում են նեֆելինային սիենիտների, հարստացված նեֆելինով: Նեֆելինային սիենիտները ալկալային սիենիտներից տարբերվում են հիմնականում նեֆելինի առկայությամբ, հաճախ կազմելով ապարի հիմնական մասսայի 20-30%-ը:

- **Տեկտոնիկա**

Փամբակի սինկլինալը դեպի հարավ անցնում է այսպես կոչված Արգաքան Միսիսանի անտիկլինալի, որ առանցքն անցնում է Ծաղկունյանց լեռնաշղթայի հյուսիսային թևով:

Հնագույն ինտրուզիաները /սերպանտինիտներ, բաբ-բրոներ, գաբրոդիորիտներ/ կապված է Արգաքան-Միսիսանի անտիկլինալի հետ:

- **Օգտակար հանածոները**

Հանքային օգտակար հանածոները գենետիկորեն կապվում են հնագույն և երիտասարդ ինտրուզիաների հետ: Նեֆելինային սիենիտների Թեժասարի հանքավայրի շրջանում բացի նշված օգտակար հանածոներից մի շարք տեղամասերում հայտնի են բարձրորակ կրաքարեր, աղյուսի արտադրության կավեր, դոլոմիտներ և այլ ոչ հանքային միներալային հումքի տեսակներ:

Նեֆելինային սիենիտների թեժասարի հանքավայրի երկրաբանական կառուցվածքը


Թեժասարի նեֆելինային սիենիտների հանքավայրի հարավային գոտին Գ. Պ. Բաղդասարյանի կողմից պայմանականորեն բաժանված է երեք տեղամասերի. Տակյալիի /կենտրոնական/ Թեժագետի /արևելյան/ և Ուլյաշինի /արևմտյան/ : Տեղամասերից վերցված


կետային նմուշների արդյունքներով ստացվել են ներքոհիշյալ պարունակությունները. Al_2O_3 -22.43%, SiO_2 -55.48%, Fe_2O_3 -4.47%, FeO -0.52%:

Թեժագետի տեղամասը տեղակայված է Թեժագետ գետի հոսքի վերին ավազանում, Մեղրաձոր գյուղից ուղիղ ճկմ հեռավորության վրա և հանդիսանում է Տակլյարի տեղամասի անմիջական արևելյան տեղամասը:

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 հաստատված նորմերի, տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 0.3g արագացում և 8-9 բալ ուժգնությամբ երկրաշարժ:

Ստորև ներկայացվում է լանջերի թեքության քարտեզը՝





Սողանքների տարածման սխեմատիկ քարտեզ՝



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Սողանքներ



Խոշոր սողանքային տարածքներ

Հողմահարման գույրիներ



Ջերմաքիմիական



Ջերմակենսաքիմիական



Ջերմասառնամանիքային



Նեոտեկտոնական բարձրացումների հավասարագծեր (կմ)



Տեկտոնական խախտումներ

Ավազանների սահմաններ



Սևանա լճի



Գետային երկրորդ կարգի



Գետային երրորդ կարգի



Գետային չորրորդ կարգի

Հայցվող տարածքում սողանքները բացակայում են, մոտակա սողանքային մարմինը գտնվում է 2,6կմ հեռավորության վրա:

**ՀԻՄԱՆՎՈՐՈՒՄՆԵՐ ԹԵԺԱՍԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԹԵԺԱԳԵՏԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՆԱԽԿԻՆՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿՈՆԴԻՑԻԱՆԵՐԸ
ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ԵՎ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ ՈՒ ՆՈՐ ՀԱՎԱՐԿ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Միութենական Կառավարությանը կից Պաշարների Պետական Հանձնաժողովը
Թեժագետի տեղամասի պաշարներ հաստատելու հետ մեկտեղ 1959թ. դեկտեմբերի իր
արձանագրության մեջ որպես էական բացթողում նշել է , որ տեղամասի հետախուզման
ընթացքում լեռնային փորվածքների և հորատանցքերի նմուշարկումը կատարվել է
ընդհատվող սեկցիաներով, մեկ մետրը նմուշարկելու և երեք մետր միջակայք բաց թողնելու
մեթոդով: Արձանագրել է , որ այսպիսի նմուշարկման ճշտությունը չի ստուգվել հետախուզման
արդյունքներով, չնայած եղել էին ՊՊՀ-ի ցուցումները նախկին՝ Տակյարլիի տեղամասի
պահանջների հաստատման վերաբերյալ կազմված արձանագրությունում:

Բացի այդ, նշել է, որ քիմիական անալիզների ստատիստիկ վերլուծության
արդյունքները ցույց են տվել, որ ընդհանուր նմուշների գերակշիռ մասում հիմնական
կոմպոնենտների պարունակությունները փոփոխվում են ոչ մեծ սահմաններում, բայց
նմուշների 48%-ը սիլիկահողի /кремнезем/ գծով գտնվում են կոնդիցիայի սահմանագծում, իսկ
30%-ը ալյումինի օքսիդի /глинозем/ գծով:

Ինչպես ցույց է տվել նմուշարկման արդյունքները, ալյումինի օքսիդի
պարունակություններն ըստ խորության իջնում են: Ելնելով այդ տեղեկեցից, Հանձնախոյզը
գտել է , որ ճիշտ կլիներ կատարել փարվածքների համատարած /անընդմեջ/ նմուշարկում, իսկ
քիմիական անալիզների կրճատման նպատակով ավելացնել նմուշների երկարությունը:

Հասկապես լուրջ բացթողում է համարվել տեղամասից վերցված նմուշների քիմիական
վերլուծությունները սիլիկահողի անալիզի համար արագացված մեթոդի ընտրությունը , որի
կիրառման արդյունքում առանձին նմուշներում եղել է չափազանցված մինչև 2.4-3.15%,
բացարձակ թվերով , միջինը 0,86% , որը համապատասխանում է 1.52 հարաբերականներին:
Մինչդեռ պաշարների հաշվարկի ժամանակով պարունակությունների մասով ցավոք
ուղղումներ չեն իրականացվել :

Ուկրաինական ԽՍՀ-ի Կիևի երկրաբանահետախուզական տրեստի լաբորատորիայում
կատարված արտաքին հսկողական 98 անալիզները նույնպես իրականացվել են արագացված

մեթոդով, որը ՊՊՀ-ն ճիշտ չի համարել: Բացի այդ, տեղամասի հետախուզման ամբողջ ընթացքում Գալիումի և մյուս հազվագյուտ ու ցրված տարրերի վերաբերյալ հսկողական անալիզներ չէին կատարվել:

Պաշարների Պետական հանձնաժողովը միաժամանակ նշել է , որ ներկայացված հաշվետվության մեջ հանքավայրի երկրաբանական կառուցվածքի լուսաբանման ժամանակ հիմնականում օգտագործվել է հանքավայրի Տակյարլիի տեղսամասի գծով հաշվետվությունում բերված տվյալները և անբավարար է բնութագրված Թեժագետի տեղամասը, որի գծով չի նկարագրված նրա երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, ապարների նյութական կազմը, հանքային շերտի ներքին կառուցվածքը, /ոչ կոնդիցիոն կազմ ունեցող դայկաների և երակների ապարների առկայությունները/, հիդրոթերմալ փոփոխված ապարների ազդեցությունը հանքանյութի որակի վրա:Չի վերլուծվել հիմնական կոմպոնենտների պարունակության փոփոխությունները ըստ հանքային հաստաշերտի տարածման ու անկման, ինչպես նաև կոնտակտներից դեպի կենտրոն չի համեմատվել տարբեր գիպսոմետիկ մակարդակներում հետախուզմամբ բացված հանքային մարմնի պարունակությունները:

ՊՊ հանձնաժողովը գտել է, որ հանքային մարմնի ուղղաձիգ անկում և մեծ հզորություն ունեցող հանքային մարմնի պայմաններում տեղամասում ճիշտ չեն օգտագործվել հորատանցքերի ուղղահայաց անցման պրակտիկան, որոնք յուրաքանչյուր հետախուզագծում տեղակայվել են երկուական (իրարից 108-265մ հեռավորության վրա) : Դրանք կողային ապարների կոնտակտին շատ մոտ են եղել տեղակայված և չեն բացահայտել հանքային մարմինը ամբողջ հզորությամբ , ինչպես նաև կողային ապարների հետ նրա կոնտակտները: ՊՊՀ-ը գտել է , որ հանքային մարմնի կենտրոնական մասը չի հետախուզված:

Որպես թերացում է համարվել նաև այն, որ չնայած պաշարների հաշվարկի հիմքում դրված է եղել այլումինի օքսիդի արտադրության հումք հանդիսացող նեֆելինային սիենիտների կոնդիցիաները՝ սահմանված ՄՍՀՄ պետպլանի կողմից, մինչդեռ պաշարների հաշվարկային բլոկներում կոնդիցիաներով ըստ նմուշների կոմպոնենտների /բաղադրամասերի/սահմանային պարունակություններ չէին սահմանվել, այդ իսկ պատճառով պաշարների հաշվարկի շրջագծում ներառվել են նեֆիլենային ապարների ոչ կոնդիցիոն տեղամասեր:

Տեղամասում Գալիումի պաշարները C_2 կարգով հաշվարկման վերցնելը հանձնաձողովը նույնպես նպատակահարմար չի համարել, քանի որ գալիումի միջին պարունակությունը որոշված է եղել միայն 11 նմուշներում, հսկողական անալիզներ չէր իրականացվել, իսկ դրա հարստացման տեխնոլոգիան ընդհանրապես չէր ուսումնասիրվել:

ՊՊՀ-ի արաձանագրությունում միաժամանակ նշվում է, որ Թեժասարի հանքավայրի նեֆելինային ապարների տեխնոլոգիական հետազոտումները կատարվել են լաբորատոր պայմաններում, հայկական ՄՍՀ Ժողոնտխորհի քիմիայի ինստիտուտի և Քանաքեռի ալյումինի գործարանում Տակյալի և Թեժագետի տեղամասերից վերցված նմուշներով: Մինչդեռ ամբողջ տեխնոլոգիական գործընթացը փակ շղթայով չի իրագործվել: Չկա յուրաքանչյուր փորձի տվյալները ելակետային և ստացված լուծույթի քանակի, դրա կազմի վերաբերյալ, որի հետևանքով էլ հաշվետվության մեջ բերված սիլիկահողի ապարը լուծույթի վերածելու տոկոսը և հնարավոր չէ ստուգել: Ապարների քիմիական հարստացման ժամանակ Գալիումը, բերիլիումը և վանդիումը 75% չափով անցնում են ալկալային լուծույթ սիլիկահողի հետ մեկտեղ: Նեֆելինային սիենիտների համալիր վերամշակման համակարգում այս տարրերի առանձնացման մեթոդը դեռևս վերջնականապես չէր մշակված:

ՀՄՍՀ մինիստրների Խորհրդին կից երկրաբանության և ընդերքի պահպանության վարչությանը միաժամանակ առաջարկվել է շարունակել կատարել սիլիկահողի արտաքին հսկողության անալիզներ $rock$ -ով նախատեսված մեթոդով ստանալու սիլիկահողի պարունակությունների վերաբերյալ ավելի ստույգ տվյալներ, ինչպես նաև շարունակել նեֆելինային սիենիտների ապարների հետազոտությունները, նպատակ ունենալով պարզելու հանքաքարից Գալիումի կորզման հնարավորությունները:

Սույն երկրաբանահետախուզական ուսումնասիրությունները ձեռնարկող «ԱՄ ԱՐՏ Շին» ՍՊ մեր ընկերությունը մանրամասն ուսումնասիրելով վերը թվարկած վերլուծություններն փորձագիտական եզրակացությունները Թեժագետի տեղամասի վերաբերյալ, արձանագրել է.

«Կոտայքի մարզի Թեժագետի նեֆելինային սիենիտների հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվել են նախորդ դարի 50-ական թվականների վերջում: Դրանց արդյունքներով կազմված պաշարների հաշվարկն իրականացվել է տվյալ ժամանակի պահանջներով հաշվարկված տեխնիկա-տնտեսական հիմնավորումներով ու կազմված կոնդիցիաներով, ելակետային տվյալներ ունենալով

խորհրդային հզոր տնտեսության և լայնածավալ հանքահումքային ռեսուրսներ ունեցող ՍՍՀՄ-ի պես վիթխարի երկրի հնարավորությունները:

Թեժագետի տեղամասի նեֆելինային սիենիտների, որպես այլումինի օքսիդի ստացման հումքի էկոնամիկական գնահատումը, նրա տնտեսական նշանակությունը, ընդերքօգտագործման տարածքի բնապահպանական պայմանները որոշվել են պլանային հզոր տնտեսություն ունեցող երկրի պահանջներով:

Ըստ ՍՍՀՄ կառավարությանը կից Պաշարների Պետական հանձնաժողովի 1959թ. Դեկտեմբերին 29-ի N 2918 արձանագրության, նրանում ներառված փորձագիտական եզրակացությունների, Թեժասարի տեղամասի պաշարների հաշվարկում թույլտրվել են սխալներ, անձշտություններ, էական բացթողումներ: Կատարվել են դիտողություններ, ներկայացվել պահանջներ դրանք շտկելու մինչ տեղամասի շահագործման աշխատանքները սկսելը: Դիտողությունները վերաբերվել են ընտրված հետախուզման մեթոդիկայի ու հիմնական փորվածքների ոչ ճիշտ տեղակայման, նմուշարկման ձևի ընտրությունը, հանքային մարմնի և կողային ապարների եզրագծման անորոշությունը, հսկողական անալիզների բացակայությունը, հազվագյուտ մետաղների և ցրված էլեմենտների ուսումնասիրությունների բացակայությունը, հանքաքարից այլումինի օքսիդի ստացման տեխնոլոգիական գործընթացը ամբողջական և գործարանային փորձարկումներով հաստատված չլինելու և այլ թերությունների:

Ըստ էության պաշարների հաշվարկի այն տարիների գնահատման արդյունքները այսօր չեն տալիս հիմնական խնդրի պատասխանը՝ տվյալ տեղամասի հանքաքարը տեխնիկապես հնարավո՞ր է օգտագործել այլումինի արտադրության հումքի ստացման արդյունաբերություն կազմակերպելու համար և նպատակահարմա՞ր է արդյոք այն տնտեսապես:

Մյուս կողմից Թեժասարի տեղամասի պաշարների հաստատումից անցել է ավելի քան 60 տարի: Այս ընթացքում աշխարհում կուտակվել է հսկայական գիտատեխնիկական փորձ, որոնք պարունակում են նորագույն օրիգինալ գիտական հայտնություններ, որոնք այն տարիներին հնարավոր չէր օգտագործել: Այն վերաբերվում է նոր, ոչ վտանգավոր և բնապահպանական կանոնների խստագույնս պահպանումներով հումքի ստացմանը, հանքաքարի կոմպլեքսային վերամշակմանը և այլ արդյունավետ գործունեությունների:

Բացի այդ այլումինի հումքի հիմնական հանքաքար հանդիսացող բոքսիտների պաշարների այսօր արդեն աշխարհում սահմանափակման և դրանց գների աճի պայմաններում առաջադեմ բազմաթիվ երկրներում, այդ թվում Ռուսաստանի Դաշնությունում, կիրառվում են նեֆելինով հարուստ հանքաքարերից այլումինի օքսիդի ստացման նոր տեխնոլոգիաների համար մշակված սխեմաներ, որոնք տարեց տարի ստանում են լայն տարածում: Այս հանքատեսակը ներկայումս համարվում է ոչ միայն այլումինի հանքաքար, այլև

համալիր հումք, որից կորզվում են հազվագյուտ և ցրված էլեմենտներ, այլ քիմիական տարրեր, ստանում սննդի տեսականի, կենցաղային, շինարարական նյութեր: Առանձնապես շեշտակի աճել է նեֆելինային սիենիտների հանքաքարերից այլումինի օքսիդի, սոդայի մթերքների, ցեմենտի ստացման համալիր վերամշակման սխեմաների կիրառման ծավալները:

Միաժամանակ այսօր այլումինի օգտագործման ծավալները աշխարհում աճում են արագ տեմպերով: Ջարգացած շատ երկրներում հանքաքար են գնում այլ երկրներից, որի հետևանքով աճում են նաև այս տիպի հանքաքարի պահանջարկն ու գները: Ստեղծվում են հանքանյութի արդյունահանման երկրների միջազգային ասոցիացաներ: Արտադրության և սպառման մաշտաբներով այլումինը գունավոր մետաղների համաշխարհային տնտեսության մեջ ներկայում գրավում է 1-ին տեղը: Այն լայնորոն օգտագործվում է՝ ավիացիոն, մեքենաշինական, էլեկտրոտեխնիկական արդյունաբերության, կիսահաղորդչային տեխնիկայում, միջուկային ռեակտորներում, հատուկ տարրաների, մի շարք մետաղների համաձուլվածքների, պայթուցիկ նյութերի արտադրության մեջ:

«ԱՄ ԱՐՏ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը ձեռնամուխ լինելով Կոտայքի մարզի Թեժագետի տեղամասի պաշարների վերագնահատմանը՝ կազմելով լրացուցիչ երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու ծրագիր, ելել է, ինչպես վեր թվարկված իրողություններից, այնպես էլ ի նկատի ունենալով, ուր ՍՍՀՄ-ում լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունը կառուցված է եղել այլ կազմակերպական և տնտեսական սկզբունքներով, ինչ ներկայում մեր ազատ շուկայական հարաբերություններով, անկախ Հայաստանի Հանրապետության տնտեսական կառավարման սկզբունքներ են:

Հանքային հումքի պահպանման և ընդլայնման, հանրապետության տնտեսական անկախության ապահովման քաղաքականությունից ելնելով առավել հրատապ է դառնում երկրի ընդերքի ուսումնասիրությունն ու հանքահումքային ռեսուրսների վերագնահատման ու ճիշտ իրացման, խնդիրները, պահանջելով պրակտիկ լուծումներ:



Նախատեսելով Թեժագետի տեղամասի համար հաշվարկված պաշարների վերագնահատում կատարելու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը , նպատակ է դրվում դրա արդյունքներով հանքավայրին տալու այսօրվա պահանջներին համապատասխան գնահատական, ստանալու երկրաբանատնտեսական պահանջվող բոլոր նյութերը, կազմելու ճշգրիտ, գիտական նոր մշակումներով նախագծեր հետագա արտադրության կազմակերպման համար: Խնդիր է դրվել զուտ Թեժագետի տեղամասի բնածին տեսակի հանքանյութն ուսումնասիրելու այն բնութագրերով որպեսզի ճիշտ ընտրվի դրա համալիր ու արդյունավետ վերամշակման տեխնոլոգիան: Միաժամանակ մեծ ուշադրություն կդարձվի նոր հետախուզական աշխատանքների արդյունքներով

ստացված տվյալների ժամանակակից մեթոդներով, կոմայուտերային տեխնոլոգիաների օգտագործմամբ մշակմանը: Այն հնարավորություն կտա ստանալու նոր կոնդիցիա տեղամասի պաշարների վերահաշվարկի համար ելնելով ներկայիս մեր հանրապետության տնտեսության պոտենցիալից, հիմնված տեխնիկա-տնտեսական այսօրվա հաշվարկների հիման վրա:

Ծրագրի հեղինակները գտնում են, որ վերջնականապես կստանան լիարժեք պատասխան տեղամասի պաշարները մեր երկրի համար այսօր ևս հաշվարկային ռեսուրս ընդունելու և դրանց ստույգ ծավալների մասին տվյալները: Իսկ սպասվող նոր կոնդիցիաներով հաշվարկի պաշարների ծավալները ակնկալվում է, որ կգերազանցեն մի քանի հարյուր միլիոն տոննան և հանքավայրը միջազգային չափանիշներով կդասվի խոշորների դասին:

Որ Թեժագետի տեղամասի համար հաշվարկված պաշարները լրացուցիչ ուսումնասիրության արդյունքներով անհրաժեշտ է վերգնահատել, պահանջում է նաև անցյալի ոչ դրական փորձը, երբ տեղամասի հետախուզման նախորդ փուլում մանրամասն չստանալով տեղամասի պաշարների արդյունաբերական գնահատման համար պահանջվող բոլոր պատասխանները, հապճեպ ձեռնամուխ են եղել լեռնաքիմական արտադրական հզորությունների ստեղծմանը և երկար տարիներով ձգձգելով շինարարությանը, փոփոխելով տեխնոլոգիական մշակումները, թանկացրել նախագիծը, անարդյունավետ դարձրել արտադրությունը և կասեցրել:

Ներկա ծրագրով հաշվի են առնված ինչպես այս իրողությունները, նախկին փորձագետների եզրակացություններն ու դիտողությունները ու ցուցումները, այնպես էլ նախատեսվում է ծրագրի իրականացման բոլոր փուլերում կիրառել նոր մեթոդներ զարգացած երկրների գիտահետազոտական ինստիտուտներում ու լաբորատորիաներում կատարված ուսումնասիրության արդյունքներով ստանալու բոլոր տվյալները պաշարների նոր գնահատում կատարելու համար:



Նկար 5.

2.3 Գլխնա

Ուսումնասիրվող շրջանի կլիման արտահայտված ցամաքային է՝ շատ շոգ, չոր ամառ, չափավոր ցուրտ, անհողմ ձնառատ ձմեռ (նկար 6): Սարահարթի կլիման հիմնականում ձևավորվում է միջին լայնությունների օդային զանգվածների ազդեցության ներքո: Տաք սեզոնի եղանակները արդյունք են տեղանքի ռադիացիոն տաքացման և, հատկապես, ցամաքային արևադարձային օդային զանգվածների ազդեցության: Իսկ ձմռանը իշխում են բևեռային օդային զանգվածները, ինչպես նաև Սիբիրյան անտիցիկլոնի (բարձր ճնշման բարիկ դաշտ) արևմտյան լեզվակների ներխուժումները: Չի բացառվում նաև երկրի մակերեսից էֆեկտիվ ճառագայթարձակումը: Նշված գործոնները հանգեցնում են կլիմայի արտահայտված ցամաքայնությանը:

Տարեկան ջերմաստիճանային ամպլիտուդը մոտ 30° է: Թերմիկ ռեժիմը բավական բարձր է՝ տարեկան միջին ջերմաստիճանը 9.1° , ամենատաք ամսվանը 22.7° (օգոստոս), իսկ միջին հունվարյանը՝ -6.1° : Տեղումների տարեկան քանակը 407 մմ է, տարվա տաք կեսին (IV-X) ընդամենը 231 մմ, իսկ ցուրտ կեսին (XI-III)՝ 176 մմ: Առավելագույն արժեքները դիտվում են մարտ-ապրիլ-մայիս ամիսներին՝ 151 մմ: Հարաբերական խոնավության ցուցանիշներն ունեն արտահայտված օրինաչափություն՝ ձմռանը առավելագույն 77-78%, ամռանը՝ 44-47%: Տարեկան միջին արժեքը 62%: Շրջանն առանձնանում է արևի ճառագայթային էներգիայի առատությամբ, արևափայլքի տարեկան տևողությունը 2456 ժամ է: Արևի ճառագայթային էներգիայի այսպիսի առատությունը հանգեցնում է ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվության մաքսիմալ արժեքների: Անհրաժեշտ է շեշտել, որ այստեղ ուլտրամանուշակագույն ճառագայթների քաղցր բացառվում է: Իսկ առանց արևի օրերի թիվը տարեկան 39 է, մայիսից մինչև հոկտեմբեր ոչ մի օր չի դիտվում առանց արևի: Քամու ռեժիմը տարբեր սեզոններում տարբեր արժեք ունի: Քամու միջին տարեկան արագությունը 2,8 մ/վրկ է, ամառը դիտվում է առավելագույն՝ 5,2 մ/վրկ (VII-VIII), իսկ ձմռանը նվազագույն՝ 1,1-1,4 մ/վրկ արագություն: Ամբողջ տարվա ընթացքում գերիշխում են հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան ուղղության քամիները:

Ձմեռը չափավոր ցուրտ է, առանձին տարիներին՝ «թույլ սառնամանիքային»: Իշխում է ձմեռային եղանակների անտիցիկլոնային տիպը՝ անհողմ շտիլային քամու ռեժիմ: 15 օր ամեն ամսվա ընթացքում դիտվում են տաքացումներով եղանակներ, երբ օրվա ընթացքում օդի ջերմաստիճանը բարձրանում է 0° -ից, դիտվում է ձյան շերտի քայքայում: Ձմեռային եղանակային ռեժիմը ունի շատ կայուն բնույթ: Առանձին տարիներին, երբ Արարատյան դաշտավայր են թափանցում Սիբիրյան անտիցիկլոնի լեզվակները կամ արկտիկական օդային զանգվածները, դիտվում է «զգալի սառնամանիքներով» եղանակային տիպը (5 օր), երբ միջին օրական ջերմաստիճանը գտնվում է $-12,5$ - $-22,5^{\circ}$ սահմաններում: Արևային չափավոր սառը օդի ոչ շատ ցածր ջերմաստիճանով եղանակի զուգակցումը ձմեռային բնապատկերի

գեղեցկության հուզական ներգործության հետ, անկասկած կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ մարդու օրգանիզմի վրա, հասկապես աճող դեռահաս օրգանիզմի վրա:

Ձմեռը համեմատաբար կարճ է՝ 93 օր, սկսվում է դեկտեմբերի առաջին տասնօրյակից և տևում մինչև մարտի առաջին տասնօրյակը: Դեկտեմբերի երկրորդ տասնօրյակից ձևավորվում է կայուն ձյան շերտ, հասնելով մինչև 60 սմ բարձրության:

Ձմռան ընթացքում ձյան ձևով դիտվող տեղումները ձևավորում են կայուն և բարձր ձյան շերտ: Դիտվում են արևոտ, «չափավոր ցուրտ» եղանակներ:

Համայնքը գտնվում է Արայի լեռան անմիջական ստորոտում, այստեղ են բացվում լեռան հարավային լանջերը, և լեռան գագաթի օդային զանգվածները, լինելով ավելի սառը և ավելի ծանր, մեծ թեքություն ունեցող լանջերով սահում են դեպի սարահարթ: Այս նույն պրոցեսն է տեղի ունենում նաև Արագածի գագաթին ձևավորված ավելի սառը և ծանր օդային զանգվածների հետ, որոնք իջնելով Ապարանի սարահարթ, հասնում են մինչև Եղվարդ: Ձմռանը մթնոլորտում թթվածնի պարունակությունն ունի առավելագույն արժեքներ՝ 260 գ/մ³: Թթվածնային ռեժիմը միանգամայն բավարար է մաքուր օդում ինչպես ծանր ֆիզիկական աշխատանք կատարելու, այնպես էլ ակտիվ սպորտային միջոցառումներին մասնակցելու համար: Ջեռուցման սեզոնն այստեղ սկսվում է նոյեմբերի 1-5-ին և ավարտվում է ապրիլի 10-15-ին, տևում է 150-160 օր:

Գարունը համեմատաբար կարճ է, բաժանվում է երկու կեսի: Առաջին կեսը սառն է, խոնավ, անկայուն եղանակային ռեժիմով: Երկրորդը՝ տաք է, Միջերկրական ծովից ցիկլոնների շարքի հաճախակի անցումներով: Գարնանային տեղումների և օդի բարձր ջերմաստիճանի զուգակցումը նպաստում են ձյան ինտենսիվ հալոցքին, և Արայի լեռան լանջերի ձորակներ-հեղեղատները վարարում են, առաջացնելով հեղեղներ և վտանգ են ներկայացնում սարահարթի ցանկատարածությունների համար:

Ամառը ունի առավելագույն տևողություն՝ մայիսի առաջին տասնօրյակից մինչև հոկտեմբերի կեսը՝ 24 շաբաթ (168 օր): Եղանակային բոլոր առանձնահատկություններն ամառվա սեզոնում պայմանավորված են հիմնականում ծածկող մակերեսի և մթնոլորտի շրջանառության փոխազդեցությամբ բարձր թերմիկ ֆոնի վրա: Մա բերում է «շատ շոգ, շատ չոր» և «շոգ չոր» եղանակների ձևավորմանը, որոնք միասին դիտվում են 25 օր ամսվա ընթացքում: Եղանակային ռեժիմը շատ կայուն է: Ամառային եղանակային ռեժիմը տարբերվում է համայնքին հատուկ առանձնահատկություններով՝ իսպառ բացակայում են «անձրևոտ» և «թխպոտ» (ամպամած ամբողջ օրվա ընթացքում) եղանակները: Կապված հիգրոթերմիկ պայմանների հետ՝ ամռանը մթնոլորտում նվազում է թթվածնի պարունակությունը մինչև 231 գ/մ³:

Օդի ջերմաստիճան


Հանքավան	1992	-7,6	-6,6	-3,0	3,6	8,5	11,4	14,8	15,0	11,1	5,9	0,6	-4,8	4,1	-29	32
----------	------	------	------	------	-----	-----	------	------	------	------	-----	-----	------	-----	-----	----

Օդի հարաբերական խոնավությունը

Հանքավան	76	75	74	72	73	74	75	74	72	73	78	77	74	66	49
----------	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Հանքավան	54	57	69	89	121	104	68	46	44	71	55	45	823	139	143	350
	38	39	44	69	86	57	42	36	40	52	44	40	86			



Նկար 6.

2.4 Մթնոլորտային օդ

Հանրապետության տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Մակայն Մեղրաձոր համայնքում և երևակման տարածքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվություն կենտրոնի պաշտոնական կայքում ներկայացված չէ:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով մշակվել է «ՀՀ բակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկը: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- փոշի՝ 0.2 մգ/մ³,
- ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³,
- ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³
- ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց





2020 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2020 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում: Համաձայն իրականացված արդյունքների 2020 թվականին 2019 թվականի համեմատությամբ բարձրացել են Վանաձոր, Ալավերդի և Հրազդան քաղաքների փոշու, Երևան, Գյումրի, Վանաձոր, Քաջարան և Չարենցավան քաղաքների ազոտի երկօքսիդների և Երևան քաղաքի ծծմբի երկօքսիդի պարունակությունները:

Փոշով աղտոտվածության գերազանցումները հիմնականում դիտվել են՝ Հրազդան, Ալավերդի և Վանաձոր քաղաքներում: Տարվա ընթացքում Հրազդանում փոշու միջին ամսական կոնցենտրացիաները գերազանցել են ՍԹԿ-ն 1.2-2.9 անգամ, Վանաձոր քաղաքում՝ 1.2-2.0 անգամ, Ալավերդի քաղաքում՝ 1.1-3.4 անգամ, Արարատ քաղաքում՝ 1.1-1.2 անգամ:

Բոլոր քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին շաբաթական, միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզներն՝ հասանելի են www.armmonitoring.am ինտերնետային կայքում:

Ստորև ներկայացվում է մթնոլորտային օդում որոշված աղտոտիչների կոնցենտրացիաներն ըստ քաղաքների:



Քաղաքների խճուղիային ոչ հասարակածային անվտանգ

. Հանրապետության խճուղիային ոչ հասարակածային անվտանգության մասին 2020 թ.

Քաղաքները	2020 թ. գործող դիտակայաններ			Փորձանմուշների քանակը	
	Ակտիվ	Պասիվ (դիտակետ)	Ավտոմատ		
Երևան	5	45	1	ակտիվ	6191
				պասիվ	4102
				ավտոմատ	36012
Գյումրի	1	24		ակտիվ	339
				պասիվ	2215
Վանաձոր	3	24		ակտիվ	3187
				պասիվ	2341
Ալավերդի	3	42		ակտիվ	2751
				պասիվ	3584
Հրազդան	1	17		ակտիվ	1054
				պասիվ	1615
Արարատ	1	12		ակտիվ	338
				պասիվ	1100
Կապան		11		պասիվ	504
Քաջարան		15		պասիվ	688
Չարենցավան		10		պասիվ	806
Ծաղկաձոր	1	14		ակտիվ	1061
				պասիվ	1340
Ընդամենը	15	214	1	69228	
Ամբերդ	1			ակտիվ	571

Օդի ջերմաստիճան

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տարեկան. °C	Բացարձակ առավելագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդան	1765	-8,0	-6,4	-2,0	5,0	10,1	13,8	17,2	17,2	13,5	7,5	1,3	-5,0	5,4	-32	35

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անունը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 5-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդան	81	78	74	70	69	69	67	64	64	69	76	79	72	69	46

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	միջին ամսական													Ձնածածկույթ		
	Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Առավելագույն տասնօրյա կային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Ձյան մեջջրի առավելագույն քանակը, մմ
	ըստ ամիսների												Տարեկան			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդան	45	57	63	86	100	69	44	31	32	60	55	46	688	132	129	310

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %									Անհողմ ությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			ըստ ուղղությունների													2	5	10
			Միջին արագությունը, մ/վ													0	0	0
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Հրազդան	823,2	հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1,9	2,1	18	19	22	24	

			2,3	2,4	2,0	1,4	1,9	2,3	2,4	1,7							
	ապրիլ		4	14	19	6	13	21	20	3	15	2,1					
			2,3	2,7	2,2	1,8	1,9	2,3	2,4	2,0							
	հուլիս		8	45	35	2	2	3	4	1	7	2,8					
			3,5	3,2	2,9	1,9	2,0	1,9	2,4	2,2							
	հոկտեմբեր		3	12	23	6	11	20	22	3	26	1,7					
			2,0	2,2	2,0	1,7	1,8	2,1	2,2	2,0							

2.5 Մակերևութային և ստորերկրա ջրային ռեսուրսներ

Երևակման տեղանքում առկա են միայն ժամանակավոր ջրահոսքեր, որոնք ձևավորվում են հարող լանջերում՝ անձրևաջրերից և ձնհալից: Հրազդան շրջկենտրոնից ոչ շատ հեռու հոսում է Հրազդան գետը, որը սկիզբ է առնում Սևանա լճից և թափվում Արաքս գետը:

Մոտակա ջրային ռեսուրսը դա Թեժ գետն է, որը հոսում է երկու առանձին տեղամասերի միջակայքով դեպի արևմուտք՝ չհատելով տեղամասերը, արևմտյան տեղամասից նվազագույն հեռավորությունը կազմում է շուրջ 250մ, իսկ արևելյան տեղամասից՝ 200մ:





Ներկայացված հեռավորությունները /200մ և 250մ/ տիված է հայցվող տարածքի եզրագծից, իսկ նախատեսվող աշխատանքները գտնվում են նշվածից մի քանի անգամ հեռու, ուստի որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա բացառվում է:

Շրջանի տարածքում Հրազդան գետն են թափվում 4 գետեր, դրանցից գլխավորը և հանքային տեղամասին մոտը Մարմարիկ գետն է , որը ունի մի քանի փոքր վտակներ: Նշված գետային ցանցը սնվում է մակերեսային և աղբյուրի ջրերից:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը

«լավ» կամ «միջակ» որակի է (2-րդ կամ 3-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Ախուրյան գետը՝ Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Քասախ գետի խառնվելուց հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Քասախ գետը՝ Ապարան քաղաքից հետո, Գետառ և Մարմարիկ գետերը՝ գետաբերանի հատվածներում, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից ներքև հատվածում և Երևանյան լիճը:

Երևանյան լիճը:




ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը


Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

2020 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 24%-ը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 37%-ը գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ը գնահատվել է 4-րդ դաս («անբավարար» որակ) և 25%-ը գնահատվել է 5-րդ դաս («վատ» որակ):


2020 թվականին ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը (դիտակետերի ընդհանուր թիվ 104)




2020 թվականին ՀՀ ջրամբարների ջրի որակի նկարագիրը (դիտակետերի ընդհանուր թիվ 6)



ՀՀ գետերի ջրի որակը 2020 թվականին



ՀՀ մակերևութային ջրերի որակը 2020 թվականին



ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
----------------	---------------	--------------------------------	------	----------

51	Հրագրան	Հրագրան	Գեղարքունիք	գյ. Գեղամավանի մոտ
52	Հրագրան	Հրագրան	Կոտայք	0.5 կմ գյ. Քաղսիից ներքև
53	Հրագրան	Հրագրան	Կոտայք	0.5 կմ գյ. Արգելից ներքև
54	Հրագրան	Հրագրան	Կոտայք	0.5 կմ Արզնի ՀԷԿ-ից վերև
55	Հրագրան	Հրագրան	Արարատ	9 կմ ք. Երևանից ներքև, գյ. Դարբնիկի մոտ
56	Հրագրան	Հրագրան	Արարատ	Գետաբերան
225	Հրագրան	Հրագրան	Արարատ	գյ. Գեղանիստի մոտ
59	Գետառ	Հրագրան	Երևան	Գետաբերան
57	Մարմարիկ	Հրագրան	Կոտայք	0.5 կմ գյ. Հանքավանից վերև
58	Մարմարիկ	Հրագրան	Կոտայք	Գետաբերան

ՀՀ գետերի ջրի որակը 2020 թվականին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրագրան	Քասախ	0.5 կմ ք. Ապարանից վերև (43)	-	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Ապարանից ներքև (44)	Լուծված թթվածին, թՔՊ,	3-րդ	5-րդ
			նիտրիտ իոն, երկաթ, ԸԱԱ	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	

Ջրավազան ային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանի 2	Ջրի որակի ցուցա նիշի դաս	Ջրի որակի ընդհանր ական դաս
Հրազդան	Քասախ	1 կմ ք.Աշտարակից վերև (45)	Ֆոսֆատ իոն, վանադիում ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
		3.5 կմ ք.Աշտարակի ցներքև (46)	Ֆոսֆատ իոն, վանադիում ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
		Գետաբերան (47)	Ֆոսֆատ իոն, վանադիում, երկաթ, կալիում, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրատ իոն		4-րդ		
	Գեղարոտ	0.5 կմ գյ. Արագածից վերև (48)	Ցինկ, նիկել, երկաթ	3-րդ	5-րդ
			Բերիլիում, ալյումին	4-րդ	
			Մանգան, կոբալտ	5-րդ	
	Գետաբերան (49)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, եր- կաթ, կալիում, ԸԱԱ	3-րդ	3-րդ	
		Շաղվարդ	0.5 կմ գյ. Փարպիից ներքև (50)	Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ
	Վանադիում *			4-րդ	
	Հրազդան	գյ. Գեղամավանի մոտ (51*)	ԹՔՊ, մանգան, նատրիում, բոր	3-րդ	3-րդ
			0.5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	ԹՔՊ, երկաթ, բարիում,	3-րդ
		Կալիում		4-րդ	
		Մանգան, վանադիում		5-րդ	
		0.5 կմ գյ. Արգելից ներքև (53)	ԹՔՊ, ԸԱԱ	3-րդ	5-րդ
			Մանգան, բա- րիում, կալիում	4-րդ	
	Ամոնիում իոն,		5-րդ		

			վանադիում		
		0.5 կմ Արզնի ՀԷԿ-ից ներքև (54)	ԹՔՊ, մանգան, բարիում, կալիում	3-րդ	5-րդ
			Վանադիում*	5-րդ	
Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ 2	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Հրազդան	9 կմ ք. Երևանից ներքև, գյ. Դարբնիկիմոտ (55)	Նիտրիտ իոն, երկաթ, նատրիում, անագ, քլորիդ իոն, ԸԼԱ, ԿՆ	3-րդ	5-րդ
			ԹԿՊ, ԹՔՊ, կոբալտ, բարիում, կալիում	4-րդ	
			Լուծված թթվածին, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
		Գետաբերան (56)	Լուծված թթվածին, ԹՔՊ, նիտրատ իոն, կոբալտ, երկաթ, բարիում, նատրիում, ԸԱԱ, քլորիդ իոն, ԸԼԱ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, կալիում, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն	4-րդ	

			Ամոնիում իոն, վանադիում *	5-րդ	
		Գյ. Գեղանիստ (225)	ԹՔՊ, նիտրատիոն, երկաթ, բարիում, նատ-րիում, քլորիդ իոն, ԸԼԱ, ԿՆ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, մանգան, կալիում	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
Ջրավազան ային կառավարմ ան տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանի 2	Ջրի որակ ի ցուցա նիշի դաս	Ջրի որակի ընդհանր ական դաս
	Գետատ	Գետաբերան (59)	ԹՔՊ, նիտրատ իոն, մանգան, կոբալտ, երկաթ, կալիում	3-րդ	5-րդ
			ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն,նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, վանադիում	5-րդ	
		0.5 կմ գյ. Հանքավանից վերև(57)	-	2-րդ	2-րդ

Հրագրան	Մարմարիկ	Գետաբերան (58)	Երկաթ, մանգան, բարիում, կալիում, ալյումին	3-րդ	3-րդ
	Ծաղկաձոր (Տանձաղբյուր)	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	Վանադիում, կոբալտ, երկաթ, բարիում, բերիլիում	3-րդ	4-րդ
			Ալյումին, մանգան	4-րդ	
		Ծաղկաձոր (Տանձաղբյուր)	Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	ԹՔՊ, նիտրիտ իոն, կոբալտ, երկաթ, բերիլիում, կալիում, ալյումին, ԸԱԱ	3-րդ
	Ֆոսֆատ իոն, վանադիում, բարիում, ընդհանուր ֆոսֆոր			4-րդ	
	Ամոնիում իոն, մանգան			5-րդ	

Հրագրան ջրավազանային կառավարման տարածք

Հրագրան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում գնահատվել է


«միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, մանգանով, նատրիումով և բորով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, ալյումինով, մանգանով, բարիումով և կալիումով:

Միջին տարեկան
կոնց. (մգ/լ)

Ճուֆատ իոն


Քառասնի գետ



Միջին տարեկան
կոնց. (մգN/լ)

Ամոնիում իոն


Քառասնի գետ







Միջին տարեկան
կոնց. (մգN/լ)

Ամոնիում իոն


Հրազդան գետ







ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2020 թվական



Հայտում լրացուցիչ ներկայացվում է իրավիճակային հատակագիծը ներառելով շրջապատող բնակավայրերը նշագրումներով: Բացի նախկինում ներկայացված Մողրաձոր , Փյունիկ, Արտավազ գյուղերի հեռավորությունների վերաբերյալ տվյալների նոր հատակագծում տրված են Կորչլու գյուղի հեռավորությունը հայցվող տարածքից հարավ 6.5 կմ, Մարմարիկ գյուղը դեպի հարավարևելք 10կմ, Աղավնաձոր բնակավայրը դեպի հարավարևելք` 11կմ, Հանքավան բնակավայրը դեպի արևմուտք 11.5կմ, Ծաղկաձոր խոշորացված համայնքի կենտրոնը դեպի հարավ արևելք 16.0կմ: Տարածքում շահագործվող Մեղրաձորի ոսկու հանքի հեռավորությունը տարածքից դեպի հարավ 5կմ է, հարստացուցիչ ֆաբրիկայինը դեպի հարավ արևելք 5.5կմ: Հատակագծում տրված է նաև տարածքում առկա բոլոր ջրային ռեսուրսների տեղակայման տվյալները: Ուսումնասիրության ենթակա տարածքից 6կմ հարավ հեռավորությամբ հյուսիս արևմուտքից հարավ արևելք հոսում է Մարմարիկ գետը, որը Հրազդան գետին է միանում Հրազդան քաղաք չհասած հատվածում և հայցվող ուսումնասիրության տարածքից հեռու է 17կմ:

Մարմարիկ գետի Մարմարիկ ջրամբարը հայցվող տարածքից գտնվում է դեպի հարավ-արևմուտք 7.5կմ հեռավորության վրա: Մարմարիկ գետի Մեղրաձոր վտակի Թեժագետ գետակ-վտակը Մեղրաձոր վտակին է միանում հայցվող տարածքից դեպի հարավ արևելք 4կմ հեռավորության հատվածում: Մեղրաձոր վտակը Մարմարիկ գետին է միանում տարածքից դեպի հարավ-արևելք 8 կմ հեռավորության վրա: Թեժագետ գետակը վերին հոսքի ավազանը, ինչպես մանրամասն տրված է ՀՍՍՀ Մինիստրերի Խորհրդին կից երկրաբանության և ընդերքի վարչության Մեղրաձորի երկրաբանական արշավախմբի կողմից 1957-1958թթ Թեժագետ տեղամասում իրականացված մանրամասն երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքներով երկրաբաններ Յ.Մ. Այվազյանի և Ռ. Ա Մկրտչյանի կողմից պաշարների հաշվարկով կազմված երկրաբանական հաշվետվության 162 էջից-168 էջերում /հայաստանի երկրաբանական ֆոնդ N0394 27.01.1960թ./ առանձնանում է խիստ մասնատված ռելիեֆով և ապարների յուրահատուկ լիթոլոգիկ կազմով, որոնք բերել են ապարների փոքր ջրակայունություն:

Թեժագետ գետակի աջ և ձախ վտակների ջրահավաք ավազանները սնվում են տարածքի փոքր աղբյուրներից: Գետակի աջ վտակը անցնում է ուսումնասիրության հայցվող երկու առանձին` Արևմտյան և Արևելյան տարածքների միջնամասով, յուրաքանչյուր առանջին տարածքի սահմանագծից 160-ից 250մ հեռավորությամբ: Այդ վտակը սկիզբ է առնում հայցվող տարածքներից մոտ 3 կմ հյուսիս գտնվող Թեժլեռ լեռան լանջերից: Գետակի մյուս ձախ վտակը սկիզբ է առնում նույն լեռան արևելյան լանջերից, հոսում հայցվող Արևելյան տարածքի արևելյան հատվածով դեպի հարավ, երկրաբանական ուսումնասիրության ենթակա տարածքից 0.5- 1.5կմ

հեռավորության վրա՝ ըստ հորիզոնի 100-ից 250մ նիշ ներքին հատվածով: Թեժագետ գետակի երկու աջ և ձախ վտակները իրար միանում են երկրաբանական ուսումնասիրության ենթակա հարավային սահմանից հարավ արևելք 1.5կմ հեռավորության վրա: Երկու վտակների սնուցումը կատարվում է փոքր աղբյուրների ջրերից, վտակների ջրի ծախսի մաքսիմումը լինում է հուլիսին /1.6 և 3.5 խմ/վրկ համապատասխանաբար/ մինիմումը դեկտեմբերին՝ /0.02 և 0.04 խմ/վրկ համապատասխանաբար /:

Ինչպես արձանագրել են ժամանակին ուսումնասիրություններ կատարած մասնագետները նեֆելինային սիենիտների հանքաշերտը պրակտիկապես ջրագուրկմ է: Գրունտաջրեր դրանցում չեն առաջացնում կայուն ջրաբեր հորիզոններ: Չնայած տեղանքի գրունտային ջրերը որևէ ազդեցություն չէին կարող ունենալ հանքավայրի հետագա շահագործմանը, այդուհանդերձ ԽՍՍՀՄ Մինիստրերի Խորհրդին կից պաշարների Պետական Հանձնաժողովը /ք. Մոսկվա/ 1959թ. դեկտեմբերին Թեժագետ տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների հաստատման ժամանակ ՀՍՍՀ երկրաբանական վարչության կողմից ներկայացված պաշարների հաշվարկի ներկայացված ծավալները սահմանափակել է Թեժագետ գետակի հոսքի մակարդակի հորիզոնով- 2360մ նիշով և ներկայացված պաշարների հաշվարկից հանել այդ հորիզոնից ներքև C₁ և C₂ կարգերով հաստատված պաշարները /Արձ. N2918, 29.12.1959, էջ 9, ՀԵՖ -0394/

Ներկա ուսումնասիրության նախագծով կազմված երկրաբանահետախուզական աշխատանքները ոչ միայն սահմանափակվել են 2360մ նիշի հորիզոնով, այլև աշխատանքները նախատեսել են միայն 2400մ նիշից բարձր հատվածներում: Այսպես արևմտյան տեղամասի հատվածում Թեժագետ գետակի աջ վտակի հոսքից մակերեսին 0.5-0.8մ խորության փորվածք՝ նախատեսվել 250 գծ.մ հեռավորության վրա, գետակի հոսքի հորիզոնից 50մ ավելի բարձր հորիզոնի վրա: Ուսումնասիրության արևելյան տեղամասում տեղակայված հետախուզափորվածքները գետակի հոսքի ավազանից հեռու են 160-200 գծ մ հեռավորության վրա, Գետակի հոսքի հորիզոնից բարձր՝ 30-50մ հորիզոնի վրա: Մակերևութից անցած բոլոր փորվածքներ փաստագրումից ու նմուշարկումից հետո ռեկուլտիվացվելու են, բերվելու նախկին տեսքի:

Ներկա փուլում իրականացվող երկրաբանահետախուզական աշխատանքները չեն նախատեսում ամբողջությամբ վերականգնել նախկինում անցած բոլոր փորվածքները: Ի նկատի է առնվել խուսափելու վերականգնումները ջրային առվակների մոտակայքերում անգամ ձորակներում, որտեղ կարող են հեղեղումների ժամանակ առվակներ առաջանալ:

Քանի որ հորատվելիք ապարները ջրակայուն են և համարյա ջրի կորուստներ չեն լինում, նախատեսվում է հորատման ռեժիմում նախատեսել ջրի ամբողջական շրջանառու օգտագործումը: Հորատման յուրաքանչյուր հրապարակում ունենալով ջրի տարողություններ, ջրավազային պարզեցում իրականացնելու համար:

Ինչպես նշված ուսումնասիրության ծրագրով Թեժագետ տեղամասի նեֆելինային սիենիտների հանքային դաշտը ունի պարզ երկրաբանական կառուցվածք, և ըստ բարձրության դասվում է 2-րդ խմբի հանքավայրեր դասին: Նախկինում հաշվարկված պաշարները մորֆոլոգիապես ունեն պարզ կառուցվածք: Շտոկվերգային հանքային մարմին 200-400մ լայնություն, 1500-2500մ երկարություն և 250-400մ խորություն: Այն ինչպես նախկինում այնպես էլ ներկայում նախատեսվում է ուսումնասիրել ոչ խիտ այլ նոսր հետախուզագծերով 180-200մ հեռավորությամբ, A կարգի պաշարների համար, մինչև 400մ B կարգի և ինչպես հետախուզման արդյունավետության և որակական ցուցանիշների, այնպես էլ հետագայում պաշարների վերահաշվարկի ժամանակ էական նշանակություն ունենա ներկայում նախատեսված փորվածքների տեղակայման վայրը +20-60մ փոփոխությունը, եթե առաջանա դրա անհրաժեշտությունը կապված ջրային ավազանին մոտ չլինելու պահանջից: Ներկա ուսումնասիրություններն ավելի շուտ ոչ թե ծավալների ճշտմանն է ուղղված, այլև լաբորատոր և վերլուծական աշխատանքների համար նմուշների առավել մանրակրկիտ և բազմակողմանի ուսումնասիրությանը:

2.6 Հողային ռեսուրսներ


Ուսումնասիրվող շրջանը ներկայացված է շագանակագույն հողերով, որի ենթաստիպերի բաշխման օրինաչափությունները ներկայացված են նկար 7-ում:

Նախալեռնային գոտու շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը տարածվում են մինչև 1800մ բարձրությունները: Շագանակագույն հողերի մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա: Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Բաց-շագանակագույն հողերի կլանող համալիրը հագեցած է հողալկալի հիմքերով, իսկ կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Երևական տարածքում հողաբուսական շերտը բացակայում է:



ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

1	Լեռնամարգագետնային ճմատորֆային խճային	32	Սևահող տիպիկ ալրային կարբոնատային
2	Լեռնամարգագետնային ճմային խորքային հագեցած	24	Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված
3	Լեռնամարգագետնային ճմային խորքային չհագեցած	34	Սևահող կարբոնատային մնացորդային կարբոնատային
4	Լեռնամարգագետնային թույլ ճմային խորքային հագեցած	35	Մարգագետնասևահողային կոպճային
5	Լեռնամարգագետնային թույլ ճմային խորքային չհագեցած	36	Մուգ շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
7	Մարգագետնատափաստանային սևահողանման խճաքարային	37	Մուգ շագանակագույն մնացորդային կարբոնատային
9	Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային չհագեցած	38	Շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
12	Անտառային գորշ ուժեղ չհագեցած կավայնացած	39	Շագանակագույն մնացորդային կարբոնատային
17	Անտառային դարչնագույն կրազերծված խճաքարային	55	Գետահովտադարավանդային մարգագետնային կոպճային
18	Անտառային դարչնագույն կրազերծված տափաստանացված	56	Գետահովտադարավանդային մարգագետնացած կոպճային

Նկար 7.

2.7 Բուսական և կենդանական աշխարհ

Մարմարիկի գետավազանի բուսական ծածկույթն ունի որոշակի տարածքային բարձրունքա-գոտիական բաշխվածություն: Ըստ բարձրունքագոտիականության դիրքի այստեղ կարելի է հանդիպել լեռնատափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերը, դրանց բազմաթիվ ենթատիպերն ու անտրոպոգեն տարբերակները:

Մարմարիկի գետավազանի Հանքավան գյուղի մերձակայքն իրենից ներկայացնում է որոշակիորեն փակ ավազան: Ծաղկունյաց լեռնաշղթայի ձախափնյա լանջերին անտառային գոտին տարածվում է մինչև 2300մ բարձրության վրա, իսկ Փամբակի լեռնաշղթայում այն առանձին կղզյակներով հասնում է մինչև 2500մ բարձրությունները: 2200-2300մ բարձրություններից սկսած լանջերը պատված են մերձալպյան և ալպյան բուսականությամբ:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Մարմարիկի գետավազանի Մեղրաձորի մերձակայքի սահմաններում՝ միջին լեռնային գոտու չափավոր խոնավ, տափաստանացված գոտում:

Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերի բուսական ծածկույթը կազմում են հացազգի և հացազգի-տարախոտային ֆորմացիաները, որոնց հիմնական էդիֆիկատորներն են մանուշակագույն գարին (*Hordeum violaceum*), ոչխարային շյուղախոտը (*Festuca ovina*), տարբեր շյուղախոտը (*Festuca varia*), ալպիական դաշտավլուկը (*Poa alpina*): Հանդիպում են ինչպես տափաստանային, այնպես էլ մարգագետնային բուսական տիպեր:

Կերհանդակների բերքատվությունը և կերային արժեքը բարձր են: Օգտագործվում են որպես գարնան-աշնան արոտավայրեր, որտեղ միամյա բույսեր շատ քիչ են հանդիպում: Հիմնականում բազմամյա բույսեր են և առանձնանում են շատ արագ վեգետացիոն ժամանակահատվածով՝ հասցնելով ծաղկել ու պտուղ տալ շատ կարճ ժամկետներում:

Նշված ծառաթփային բույսերի տակ և տափաստանացված բացատներում խոտածածկը ներկայացնում են Ջանգակ լայնատերև (*Campanula latifolia*), Ջանգակ հավաքված (*C. glomerata*), Ընձախոտ արևելյան (*Aconitum orientale*), Ընձախոտ քթավոր (*A. nasutum*), Ոջլախոտ գալարուն (*Delphinium flexusum*), Գորտնուկ կովկասյան (*Ranunculus caucasicus*), Հողմածաղիկ փնջավոր (*Anemone fasciculata*), Սինդրիկ օղակավոր (*Polygonatum verticillatum*), Լիզուստիկում թևավոր (*Ligusticum alatum*), Կոծուկ/Բալդրդան Սոսնովսկու (*Heracleum Sosnowskyi*), Շուշանբանջար ոսկեգույն (*Chaerophyllum aureum*), Զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), Հալնորուկ տափակատերև (*Senecio platyphylloides*), Քարխոտ կոշտ (*Symphytum asperum*), Ոգնախոտ հավաքված (*Dactylus glomerata*), Հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium*), Շյուղախոտ հսկա (*Festuca gigantea*), Ուրց սովորական (*Thymus vulgaris*), Առյուծատամ թավոտ (*Leontodon hispidus*), Երիցուկ երիցուկանման (*Matricaria matricarioides*), Սրոհունդ ծակոտկեն (*Hypericum perforatum*), Տերեփուկ մար•ա•ետնային (*Centaurea jacea*) և այլ բուսատեսակներ:

Բույսերի վեգետացիան սկսում է մայիսի սկզբներին: Մայիսի առաջին տասնօրյակին, տերևների և ցողունների կանաչ ֆոնի վրա առանձնանում են Պապլոր

հայկականը (*Muscari armeniacum*), Գնարբուկ գարնանայինը (*Primula veris*) և Պուշկինիա մկնաստիսանմանը (*Puschkinia scilloides*):

Սոխուկավոր բույսերից հետո՝ ամռան ընթացքում, խոտաբույսերի ընդհանուր կանաչ ֆոնի վրա առանձնանում են *Cephalaria*-ի (բաց դեղնավուն), *Campanula*-ի (կապույտ), *Hypericum* -ի (ոսկեգույն դեղին), *Achillea*-ի (սպիտակ), *Centaurea*-ի (բաց մանուշակագույն), *Thymus*-ի (մուգ մանուշակագույն), *Leontodon*-ի (դեղին) ու *Matricaria*-ի (դեղին զամբյուղներ՝ շրջապատված սպիտակ թերթիկներով) ծաղիկների խայտաբղետ գույները: Ամռան վերջին կաղնու ծառերի տակ հայտնվում է մեծ հովանոցասունկը (*Macrolepiota procera*):

Աշնանային պատկերը միատարր է: Ընդհանուր ֆոնի վրա շատ հազվադեպ երևում են մի քանի բուսատեսակների ուշացած ծաղիկներ:

Բարձրադիրքերում լանջերն ավելի թեք են և դժվար հասանելի: Այս հատվածներում ծառերն առավել հազվադեպ են հատվել և որոշակիորեն պահպանված են: Տեղ-տեղ առկա է նաև կաղնու բնական վերած:

Հանքարդյունաբերության համար նախատեսված տարածքի բուսատեսակային կազմում Հայաստանի կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և սնկեր չեն հայտնաբերվել: Հետազոտվող տարածքը ներկայացված չէ նաև Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների տարածման արեալներում:


Մրտավարդ կովկասյան *Rhododendron caucasicum* կատեգորիա-EN B 1 ab/iii,iv/-2 ab/iii,iv/ վտանգված տեսակը համաձայ ՀՀ կարմիր գրքի տարածված է՝ Հայաստանում հանդիպում է Լոռու (Բագու մի լեռնաշղթա) և Իջևանի (Փամբակի լեռնաշղթա) ֆլորիստիկական շրջաններում: AOO 24 քառ. կմ է: Լոկալիտներն են՝ 2: Հայաստանից բացի աճում է Մեծ կովկասում, Դաղստանում, Անդրկովկասում, Նյուսիս-Արևելյան Թուրքիայում:

Հայ ց վ ո ղ տ ա ր ա ծ ք ու մ բ ա ց ա կ ա յ ու մ է :

Էվոնոմիա *Eunomia rotundifolia* կատեգորիա EN B 1 ab/iii,iv/-2 ab/iii,iv/ վտանգված տեսակը հանդիպում է՝

Հայաստանում հանդիպում է Ապարանի (լեռնագագաթ Քյորոլի) և Գեղամի (Սպիտակ սար, Ակնասար, Եռաթմբեր, Ակնա լիճ) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 200 քառ. կմ, AOO՝ 20 քառ. կմ, լեռնալիտներն են՝ 2: Ընդհանուր արևալը ընդգրկում է Մեծ և Փոքր կովկասյան լեռնաշղթաները, ուստի հայցվող տարածքում սա ևս բացակայում է:

Ստորև ներկայացվում է բուսական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզը՝



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԲՆԱԿԱՆ ԲՈՒՄԱԾԱԾԿԻ ՏԻՊԵՐ

Մարգագեղնային բուսականություն

- 1 Բարձրալայան տարախոտա-հացազգա-բոշխային (գորգեր) մասնակցությամբ՝ *Campanula tridentata* Schreb., *Carex tristis* Bieb., *Taraxacum stevenii* DC., *Plantago saxatilis* Bieb., *Colpodium araraticum* Tarutv., *Poa alpina* L., *Carum caucasicum* (Bieb.) Boiss., *Nardus glabriculumis* Sakalo, *Sibbaldia parviflora* Willd.
- 2 Ցածրալայան (ենթալայան) հացազգիների և տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Bromopsis variegata* (Bieb.) Holub, *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Anemonastrum fasciculatum* (L.) Holub, *Betonica macrantha* C. Koch, *Veronica Gentiana*, *Cephalaria*, *Inula*, *Myosotis* ցեղի տեսակների հետ համատեղ

Մարգագեղնադափաստանային բուսականություն

- 3 Մասնակցությամբ՝ *Festuca versicolor* Tausch, *F. ovina* L., *F. valesiaca* Gaudin, *Phleum pratense* L., *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Carex humilis* Leys, *Trifolium ambiguum* L.

Անդառային բուսականություն

- 4 Լայնատերև, մասնակցությամբ՝ հաճարենու (*Fagus orientalis* Lipsky), կաղնու (*Quercus iberica* Stev. *Q. macranthera* Fisch. et Mey. ex Hohen), բոխու (*Carpinus betulus* L., *C. orientalis* Mill), հալեմու (*Fraxinus excelsior* L.), լորենու (*Tilia begoniifolia* Stev.).
- 5 Կաղնուտներ, մասնակցությամբ՝ *Quercus macranthera* Fisch. et Mey. ex Hohen., *Q. boissieri* Beut., *Q. araxina* (Trautv.) Grossh
- 6 Անտառային խառը մշակաբույսեր, մասնակցությամբ՝ *Pinus pallasiana* D. Don, *P. banksiana* Lamb., *Fraxinus excelsior* L., *Hippophae rhamnoides* L., տեսակներ *Salix*, *Acer*, *Ulmus* և ավազուտային տարախոտների

Քսերոֆիլ անտառանդառային բուսականություն

- 7 Գիհու խառը, մասնակցությամբ՝ *Juniperus polycarpus* C. Koch, *J. oblonga* Bieb., *J. hemisphaerica* J. et C. presl., *J. foetidissima* Willd., *J. Sabina* L., *Ephedra procera* Fisch. et Mey.
- 8 Սաղարթավոր խառը, մասնակցությամբ՝ *Paliurus spina-christi* Mill., *Spiraea crenata* L., *Amgdalus fenzliana* (Fritsch) Lipsky, *Pistacia nutica* Fisch. et Mey. *Celtis glabrata* Stev. Ex Planch., *Cerasus incana* (Pall.) Spach, *Pyrus salicifolia* Pall.

Տափաստանային բուսականություն

- 9 Հացազգային, տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albobovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. lessingiana* Trin. et Rupr., *S. tirsia* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*

Լեռնաքսերոֆիլ բուսականություն

- 10 Ֆրիգանդի թփերի մասնակցությամբ՝ *Amygdalus fenzliana* (Fritsch) Lipsky, *Cerasus incana* (Pall.) Spach, *Rhamnus pallasii* Fisch. et Mey., *Celtis glabrata* Stev. ex Planch. տեսակներ մասնակցությամբ *Astragalus*, *Acantholimon*, *Acanthophyllum*, *Onobrychis cornuta* (L.) Desv., *Salvia dracocephaloides* Boiss., *Thymus kotschyanus* Boiss. et Hohen.

Կիսաանապատային բուսականություն

- 11 Օշինդրա-էֆենդրային, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. et Mey., *Tanacetum argyrophyllum* (C. Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis* (Gouan) Parl.

Անապատային բուսականություն

- 12 Հալոֆիլ, մասնակցությամբ՝ *Salsola ericoides* Bieb., *S. dendroides*

Կենդանական աշխարհ

Ի տարբերություն բուսական համակեցությունների, Հայաստանի լանդշաֆտային գոտիներում կենդանատեսակները չեն համարվում էկոհամակարգերի կայուն բաղադրամասեր, քանի որ շարժունակության շնորհիվ դրանք սովորաբար ունեն միջգոտիական տարածման ընդարձակ արեալ: Շատ տեսակներ սեզոնային և այլ միգրացիաների, ինչպես նաև բարձր հարմարողականության շնորհիվ միաժամանակ կարող են լայն տարածում ունենալ տարբեր լանդշաֆտային գոտիներում:

Մարմարիկի գետավազանն առավել հարուստ է անողնաշարավորների տեսակային բազմազանությամբ:

Ողնաշարավոր կենդանիներից Մարմարիկի գետավազանին բնորոշ են.

•կաթնասուններից՝ գորշ արջը (*Ursus arctos*), աղվեսը (*Vulpes vulpes*), գայլը (*Canis lupus*), գորշ ականջեղը (*Plecotus auritus*), աքիսը (*Mustela nivalis*), նապաստակը (*Lepus europeus*), քարակզաքիսը (*Martes foina*), անտառային քնկոտիկը (*Dryomys nitedula*), խլուրդը (*Talpa orientalis*), գորշատամ փոքրը (*Sorex minutus*), կուտորան (*Neomys fodiens*), անտառային մուկը (*Apodemus sylvaticus*), լայնականջ համստերը (*Cricetus auratus*), սովորական դաշտամուկը (*Microtus arvali*), փոքր կույր մուկը (*Spalax leucodon*) և չղջիկների մի շարք տեսակներ. անտառային/ նատուրալիստի փոքրաչղջիկ (*Vespertilio nathusii*), երգույն մաշկեղը (*V. murinus*), եվրոպական լայնականջը (*Barbastella barbastella*), փոքր իրիկնային չղջիկը (*Nyctalus leisleri*) գաճաճ չղջիկը (*Pipistrellus pipistrellus*), ուշաթոփչք մաշկեղը (*Vespertilio serotinus*):

•թռչուններից՝ եղինջաթռչնակը (*Troglodytes troglodytes*), սոսնձաթռչնակը (*Turdus viscivorus*), երգող կեռնեխը (*T. philomelos*), սպիտակախաձի կեռնեխը (*T. torquatus*), սև կեռնեխը (*T. merula*), իսայտաբղետ կեռնեխը (*T. Saxatilis*), սովորական սոխակը (*Luscinia luscinia*), կանաչ գեղգեղիկը (*Phylloscopus trochiloides*), այգու շահրիկը (*Sylvia borin*), (*S. atricapilla*) սևագլուխ շահրիկը, դեղնագլուխ արքայիկը (*Regulus regulus*), սպիտակավիզ ճանճորսը (*Muscicapa albicollis*), փոքր ճանճորսը (*M. parva*), Ալպիական պրունելան (*Prunella collaris*), սովորական նսպնուկը (*Carpodacus erythrinus*), ամուրիկը (*Fringilla coeles*), սև ագռավը (*Corvus corvus*), սև ցինը (*Milvus korschun*), լորաճուռակը (*Accipiter*

nisus), ճուռակը (*Buteo buteo*), անտառային մկնաճուռակը (*Circus Cyaneus*) տափաստանային մկնաճուռակը (*Circus macrourus*), անտառակոցարը (*Scolopax rusticola*), անտառաբուն (*Strix aluco*) և այլն:

•սողուններից՝ Վալենտինի մողեսը (*Darevskia valentini*), հայկական ժայռային մողեսը (*Darevskia armeniaca*), միջին և ճարպիկ մողեսները (*Lacerta media*, *L. agilis*), կովկասյան ափաման (*Laudacia caucasica*), դեղնափորիկը (*Pseudopus apodus*), սովորական լորտուն (*Natrix natrix*), անդրկովկասյան սահնօձը (*Elaphe hohenackeri*), քառաշերտ սահնօձը (*E. Quatuorlineata*), սովորական պղնձօձը (*Coronella austriaca*):

Նախնական գնահատման հայտի կազմման ժամանակ ուսումնասիրվել է ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված տեղեկատվությունը բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր (հիմք՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքը. <http://www.mnp.am>): Մեղրաձոր համայնքի շրջանում արձանագրված են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված միայն մի տեսակ՝ Սոխի Օլթի: Այն համարվում է վտանգված տեսակ, բուսատեղանին սպառնացող վտանգը կապված է տափաստանների հերկման և գերարածեցման հետ: Բույսը աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ.մ. 1500-2300մ բարձրությունների վրա, քարքարոտ լեռնային տափաստաններում: Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից շրջանում հայտնի են.

- Քալաշյանի երկարաբեղիկը – ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, որը տարածված է Արայի լեռան հարավային լանջերին՝ Եղվարդից դեպի հյուսիս-արևելք::

- Հայկական սևամարմինը – սահմանափակ արեալով տեսակ, Հայաստանի էնդեմիկ: Տարածված է Եղվարդ ավանի շրջանի լեռնատափաստաններում, պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

Մայիտակափոր մողես *Darevskia unisexualis*

Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ կարմիր ցուցակում (ver. 3.1) »Near Threatened« կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես »խոցելի«՝ VU B1a:

Տարածվածությունը: Տեսակի արեալը մասնատված է մի քանի մեկուսացված պոպուլյացիաների Հայաստանի սահմաններում և Արևելյան Թուրքիայի ու Հարավային Վրաստանի հարակից շրջաններում:

Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանի հյուսիսային և կենտրոնական լեռնային շրջանները:

Ապրելավայրերը: Բնակեցնում է լեռնատափաստանային գոտու ժայռերը, քարերի կույտերը և քարքարոտ լանջերը, 1700-2000 մ ծ.մ.բ. բարձրության վրա:

Կենսաբանության առանձնահատկությունները: Ձմեռումից դուրս է գալիս ապրիլի կեսերին-մայիսի սկզբին: Սնվում է, հիմնականում բզեզներով և թաղանթաթևավորներով: Բազմանում է կուսածնությամբ: Չվաղրում է հունիսի վերջին-հուլիսի սկզբին: Չվակույտում՝ 2-7 ձու: Ձագերը դուրս են գալիս օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին:

Թվաքանակը և դրա փոփոխման միտումները: Տեսակի թվաքանակը կայուն է: Վտանգման հիմնական գործոնները: Հարմար ապրելավայրերի կրճատումը գյուղատնտեսական գործունեության հետևանքով:

Պահպանության միջոցառումները: Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

Կարմրաթև մագլցող, *Tichodroma muraria* (Linnaeus, 1766)

Ենթատեսակ՝ *Tichodroma muraria muraria* (Linnaeus, 1766)

Կարգ՝ ՃՆՃՂՈՒԿԱՆՄԱՆՆԵՐ, PASSERIFORMES

Ընտանիք՝ Սիտեղներ, Sittidae կարգավիճակը: Սակավաթիվ օլիգոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

Տարածվածությունը: Ենթատեսակը տարածված է Հարավային Եվրոպայից դեպի արևելք՝ մինչև Արևմտյան Իրան:

Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանում հանդիպում է համարյա ամբողջ տարածքում՝ բարձր լեռներում՝ բնակեցնելով ժայռային բիոտոպները: **Ապրելավայրերը:** Հանդիպում է բարձր լեռներում՝ բնակեցնելով ժայռային կիրճերը և բարձր ժայռերով հատվածները:

Կենսաբանության առանձնահատկությունները: Տարեկան, սովորաբար, ձվադրում է մեկ անգամ՝ դնելով 4-5 ձու: Սնվում է առավելապես միջատներով: Թվաքանակը և դրա փոփոխման միտումները: Ներկայիս թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն: **Վտանգման հիմնական գործոնները:** Բազասական գործոնների ազդեցությունն ուսումնասիրված չէ: Պահպանության միջոցառումները: Անհրաժեշտ է ուսումնասիրել մարդածին գործոնների ազդեցությունը՝ հետազայում տեսակի և դրա ապրելավայրերի պահպանման միջոցառումների պլանավորման համաԵրկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման համար հայցվող տարածքում կատարված նախնական զննումների ժամանակ նշված բուսական և կենդանական տեսակները չեն դիտարկվել:

Հայցվող տարածքը գտնվում է 2360-2700մ բարձրությունների վրա, վերը նշվածները չեն կարող լինել այդ բարձրությունների վրա:

2.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշման ՀՀ Կոտայքի մարզում գրանցված են բնության հատուկ պահպանվող հետևյալ տարածքները.

- Էրեբունու արգելոց,
- «Բանքսի սոճու» արգելավայր,
- «Արզական-Մեղրաձորի» արգելավայր,
- «Խոսրովի անտառ» պետական արգելոց ,
- «Հանքավանի ջրաբանական» արգելավայր:

Ստորև ներկայացվում է տեղեկատվություն բնության պահպանվող տարածքների և հայցվող տարածքի միջև եղած հեռավորությունների վերաբերյալ:

Աղյուսակ 1.

Հ/Հ	Բնության հատուկ պահպանվող տարածքը	Նվազագույն հեռավորությունը ԲՀՊՏ և հայցվող տարածքի միջև, կմ
1.	Էրեբունու արգելոց	32,6
2.	«Բանքսի սոճու» արգելավայր	45,2
3.	«Արզական-Մեղրաձորի» արգելավայր	16,6
4.	«Հանքավանի ջրաբանական» արգելավայր	29,4

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի՝ բնության հատուկ պահպանվող տարածքների կատեգորիայից է բնության հուշարձանը: ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշմամբ: ՀՀ Կոտայքի մարզում հաշվառված են հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 2.

Հ/Հ	Անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3
1.	«Անանուն» խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ

2.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
3	«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
4	«Պեոլիտե փիդ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
5	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
6	«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
7	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
8	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
9	«Անանուն» լանջային երոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
10	«Անանուն» լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
11	«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
12	«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ

1	2	3
13	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
14	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
15	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
16	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
17	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
18	«Գուրանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ

19	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ
20	Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր
21	«Հաղպրտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
22	«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
23	«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
24	«Ձորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
25	«Ավազան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
26	«Սագերի» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
27	«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ

1	2	3
28	«Բազմալիճք» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
29	«Լուսնալիճ» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ
30	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
31	«Ռեկիկտային կրկես Քյորոզլի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
32	«Ալպյան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպա-սարի զագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)


33	«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա
----	----------------------	--

Նշված հուշարձանները գտնվում են ուսումնասիրվող տարածքից մոտ 2կմ հեռավորության վրա, ուստի որևէ ազդեցություն նախատեսվող աշխատանքները չեն կարող ունենալ թվարկված հուշարձանների վրա:

ԾՐԱԳՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Երկրաբանահետախուզական աշխատանքների ներկա ծրագրի նպատակն է նախորդ տարիների աշխատանքի արդյունքները հաշվի առնելով, ինչպես նաև օգտագործելով տարբեր կոմպենտենտ մարմիններում դրանք փորձագիտական ուսումնասիրության եզրակացությունները, որոնք մանրամասն ներկայացված են սույն աշխատանքի նախորդ գլխում, կազմել լրացուցիչ աշխատանքների նոր մեթոդիկա, ստանալ բոլոր անհրաժեշտ տվյալները տեղամասի պաշարների վերահաշվարկման ու նոր ընդերքաբանական եզրակացություն այն ներկայացնելու համար: Հանքային տեղամասի լրացուցիչ հետախուզման մեթոդիկայի ընտրությունը կատարելուց հեղինակները ճիշտ և արդյունավետ են համարել նախկինում ընտրված նեֆելինով հարուստ նեֆելինային և կեղծ լեյցիտային սիենիտների տարածմանը խաչաձև հետախուզագծերով, ընտրված դրանցում տեղակայելով մագիստրալային հետապուզաառուներ շուրֆեր և հորատանցքեր :

Լրացուցիչ հետախուզման և հետազոտությունների արդյունքներով կկազմվի 1:2000 մասշտաբի երկրաբանական նոր քարտեզ՝ ընդգրկելով միայն Թեժագետի տեղամասը:



**Թեժագետ տեղամասի երկրաբանական քարտեզը ծրագրով
Նախատեսվող փորվածքներով**

Հետախուզման այս փուլում աշխատանքները կտարվեն որակական առավել բարձր պահանջներով, ամբողջությամբ կատարելով նախորդ աշխատանքների արդյունքների վերլուծությունների եզրակացությունները:

Նախատեսվում են ամբողջությամբ վերականգնել տեղամասում 1950-ական փվականների վերջում անցած բոլոր մագիստրալային հետախուզումները՝ ընդհանուր 3140 գծամետր ծավալով և 19 շուրֆերը: Նախատեսվում է նոր 15 շուրֆերի անցում, ինչպես նաև 2010գծմ հորատանցքերի հորատում: Բացի այդ նախատեսվում է տեղամասի տարբեր երկու տեղամասերից անցնել երկուական ոչ մեծ երկարության խարաներ /յուրաքանչյուրը 5.0մ երկարության և 2.0x4.5 մ մակերեսով/ փորձնական հանույթի միջոցով ստանալ 500 տ հանքանյութ, տեխնոլոգիական նմուշին անհրաժեշտ նյութեղեն հումք ստանալու համար: Աղյուսակում տրված է նախատեսվող աշխատանքների ֆիզիկական ծավալներն ըստ տեսակների և տեղակայման վայրերի / 1/

Ներկա ծրագրով նախատեսված լրացուցիչ և վերագնահատողական իրականացման արդյունքները հնարավորություն կտան տեղամասերի վերաբերյալ ստանալու երկրաբանական, տեխնոլոգիական և տնտեսական հիմնավորված ավարտուն գնահատականներ:

Կճշտվեն տեղամասերի երկրաբանական կառուցվածքները, դրանց ընդհանուր չափերը և սահմանագծերը:

Լրացուցիչ հետախուզման այս փուլի 2022-2025թ.թ. ծրագրի իրագործման արդյունքներով կկազմվի տեղամասերի տեխնիկատնտեսական զեկույց:

- ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Ի մի բերելով Թեժագետի տեղամասում սույն ծրագրով առաջադրվող հիմնական բոլոր տեսակների աշխատանքների ծավալները, որոնք նախատեսվում են իրականացնել 2022թ. երրորդ եռամսյակից մինչև 2025թ. Երրորդ եռամսյակ, այն կունենա ներքոհիշյալ ամփոփ բնութագիրը: Աղյուսակում 1-ում տրված է նախատեսվող աշխատանքների ֆիզիկական ծավալներն ըստ տեսակների

- Նախկինում անցած մագիստրալային հետախուզաառուների վերականգնում

Քանի որ Թեժասարի հանքավայրի Թեժագետ տեղամասը ընդունվել է որպես այլումինի հումքի արտադրության «ա» խմբին պատկանող հանքավայրերի դասին, հնարավոր է համարվել նաև շարունակելու հետախուզման աշխատանքները կիրառելով նախկինում ընդունված հետախուզական ցանցի խտությունը: Այս դեպքում տեղամասում կիրառվել է ըստ պրոֆիլի հետախուզագծերի հեռավորությունը իրարից A₂ B₁ պաշարները հաշվարկելու համար 200մ և C₁ կարգի պաշարների համար 300-400մ: Փորվածքների հեռավորությունը հետախուզագծերում 50-150մ:

Այս աշխատանքներով լուծվել են ներքոհիշյալ խնդիրները.

Նախատեսված հետախուզագծերով հանքային մարմինն իսաչաձև անցած մագիստրալային փարվածքների վերականգնմամբ հնարավորություն կստեղծվեն ամբողջ հզորությամբ բացելու հանքային մարմինը , կատարել նոր համատարած նմուշառում:

Ելնելով առաջադրված խնդիրներից նախատեսվել է մագիստրալային հետախուզաառուների և հատկապես մեծ թեքություններ ունեցող տեղամասերում անցած մաքրվածքները հասցնլ այնպիսի վիճակի, որպեսզի իրականացվի ինչպես երկրաբանական փաստագրում և տեքստային նկարագրում, այնպես էլ կատարվի համատարած՝ առանց ընդհատումների նոր ակոսային նմուշարկում, արմատական ապարներից:

Ինչպես ճանապարհների կառուցման, այնպես էլ մագիստրալային ու հետախուզաառուների վերականգնման ժամանակ հնարավորինս օգտագործվելու է տեղամասերում գոյություն ունեցող նախկինում անցած դաշտամիջյան և

երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման համար անցած ճանապարհները՝ խուսափելով նոր հողատեսքեր բացելուց, որը թույլ է տալու նվազեցնել մակերևույթի բնական խախտումները: Մագիստրալային նախկինում անցած հետախուզաատունների ու մաքրվածքների պարամետրերի միջին մեծությունները կազմել են խորությունը 0.5-0.8 մ, լայնությունը 0.8մ, երկարությունը 220-410 մ. ընդամենը $3140 \times 0.8 \times 0.6 = 1507.2$ մ³:

Մագիստրալային Հետախուզաատունների և մաքրվածքների մեծամասնությունը, մոտ 80%-ը կվերականգնվեն մեխանիզմների միջոցով: Անցկացվելիք բոլոր հետախուզաատունները գրունտի ետ լցմամբ կծածկվի, եթե կլինեն հողային շերտ, անպայման կռեկուլտիվացվի: Երկրաբանական փաստագրումը և նկարահանումը իրականացվելու է փորվածքների անցմանը զուգահեռ հանքային գոտիներից ու ապարների հետ դրանց կոնտակտների փոփոխված հատվածներից վերցվելու են համատարած ակոսյախն նմուշներ:

- Մակերեսային լեռնային փորվածք՝ շուրֆերի վերականգնում

Նախորդ հետազոտողները շուրֆերը հիմնականում անցել են մագիստրալային հետախուզաատուններից և մաքրվածքներից և ծառայել են փոքր ինչ խորություններով բացված հանքային մարմինների ուսումնասիրման և նմուշարկման համար: Ծրագրով նախատեսվում է իրականացնել նախկինում մակերևույթից անցած 19 շուրֆերի վերականգնում, 1.25 քառ. մ կտրվածքով, յուրաքանչյուրը 1.0մ խորությամբ, ընդհանուր 23.75 խ.մ ծավալով: Դրանց խորությունները տատանվել են 0.8-ից մինչև 1.2 մ և միջինը կազմել է 1.0 մ: Ի նկատի ունենալով շուրֆերի ոչ մեծ խորությունը և կողային նստվածքաշերտի ու ապարների կայունությունը, դրանց ամրակապում չէր նախատեսվել և չէր իրականացվել: Մակերևույթից անցած լեռնային այս փորվածքների վերականգնման համար անհրաժեշտ կլինի դուրս հանելու շուրֆ լցված ապարը, հասնելու փորվածքի հատակին՝ արմատական ապարին, մաքրելու շուրֆի կողային պատերը: Այն կիրականացվի ինչպես էքսկավատորի, այնպես էլ մակերևույթում աշխատող լեռնացնող բանվորների միջոցով:

Բոլոր շուրֆերը կրկին կփաստագրվեն, իսկ մի մասը նաև կֆոտոնկարահանվեն, փորվածքները կրկին կնմուշարկվեն, արդյունքները անցկացնելով նմուշարկման պլաններ:

Նմուշարկման արդյունքները ստանալուց հետո շուրֆերից հանած ապարները ետ կլցվեն հորեր, հողաշերտի առկայության դեպքում կռեկուլտիվացվեն:

- Մակերևութից անցնելիք նոր շուրֆերի անցում

Բացի նախկինում անցած շուրֆերի մաքրումից ներկա ծրագրով նախատեսվում է նաև մաքրված մագիստրալային հետախուզաառուներից անցնել նաև նոր շուրֆեր, խտացնելով յուրաքանչյուր հետախուզագծու տեղակայված փորվածքների հեռավորությունը իրարից:

Այս նպատակով նախատեսված է տեղամասում անցնել նոր 15 շուրֆեր: Այս շուրֆերը նմանապես տեղակայված են մաքրվելիք մագիստրալային հետախուզաառուների մագիստրալային գծի վրա: Դրանք կանցնեն 1.2 քառ. մ կտրվածքով (1.0x1.25)միջինը 1.0մ խորությամբ (0.6-1.4մ), ընդամենը 18.75 մ³ ծավալով: Ինչպես և վերականգնված շուրֆերը, նորերը նույնպես կբացեն արմատական ապարները, կկատարվի երկրաբանական փաստագրում և տեքստային նկարագրում, կվերցվի ակոսային նմուշարկում (շուրֆի 1 կողից և հատակից):

- ՀՈՐԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2022-2025թ.թ. երկրաբանահետախուզական ուսումնասիրությունների ներկա ծրագրով նախատեսված այս կարևորագույն հետախուզական փորվածքների անցումը պլանավորելուց հեղինակները ի նկատի են ունեցել երաշխավորությունները և ցուցումները, որոնք են փորձագետները Թեժասարի տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների հաշվարկը փորձաքննելուց և հաստատման ընթացքում: Առաջինը, որ նրանք ճիշտ չէին համարել ուղղաձիգ հորատման ընտրությունը և որ հորատանցքերով չէին հատվել հանքային մարմինների և կողային ապարների կոնտակտները: Բացի այդ հորատումները դադարեցվել էին տարբեր գիպսոմետրիկ

բարձրությունների վրա ու հնարավոր չի եղել որոշելու հանքային մարմնի ներքին հորիզոնները: Այս դիտարկումից ելնելով Թեժագետի տեղամասի լրացուցիչ հետախուզման ներկա ծրագրով բոլոր 8 հետախուզագծերից նախատեսված հորատանցքերը տեղակայված են այն հաշվով, որպեսզի խտացվեն փորվածքների միջև միջակայքը, բայց ամենակարևորը հորատվելու են թեք (-32 ° –ից մինչև 57°), որոնք էլ հնարավորություն են տալու հատելու ինչպես կողային կոնտակտները, այնպես էլ մինչև 2360մ հորիզոն (մինչև Թեժագետ գետի նիշը) հորիզոնի ուսումնասիրությունը անհրաժեշտ ցանցով:

Հորատման աշխատանքների իրականացման համար ընտրվել է սյունակային հորատման հորատանցքերի անցումը հանուկի ստացումով:

Հորատումը կիրականացվի ալմաստային եղանակով (KCCCK) տիպի սյունակային կրկնակի խողովակների օգտագործումով: Հորատման ընթացքում որպես կանոն կկիրառվեն հորատանցքերի ստանդարտ կառուցվածք: Փխրուն ապարների միջակայքերի հորատանցումը կատարվել է PQ տրամագծով, դրան հաջորդելով 120 մմ տրամագծով խողովակներով ամրակապումը: Հորատանցքերի հորատման հիմնական տրամագիծը ընտրվել է HQ (95.6 մմ) կեռնի հանույթի 61.5մմ տրամագծի ապահովումով: NQ (75.4մմ) տրամագծի հորատում կիրականացվի ջարդոտված գոտիներով կամ ինտենսիվ ճեղքավորումներով երկրաբանական բարդություններով միջանցքերը հորատելուց: Հորատման գործընթացում որպես լվացող լուծույթ կօգտագործվի ջուր:

Ծրագրում ընդգրկված բոլոր վեց հետախուզագծերի վրա նախատեսվում է հորատել հորատանցքեր (N10—ից N19) ընդհանուր խորությունը 2010 գծ.մ:

Հետախուզական հորատացքերում հանուկի (կեռնի) ելքը կհամապատասխանի ժամանակակից պահանջերին, որոնց ցուցանիշները տրվում է աղյուսակ 3- ում:

Աղյուսակ 3

Հորատման ընթացքում կեռնի (հանուկի) պահանջվող ելքի ցուցանիշները

Կեռնի ելքը		Այդ թվում
-------------------	--	------------------

	ԴԴԻ ստանդարտ ի պահանջները	Միջինը	Մինիմումը	Մաքսիմումը
Ամբողջ հորատանցքի համար	90.0	95.0	76.9	99.0
Հանքային գոտիներում	95.0	96.5	91.5	99.6

Հորատահանուկի ելքի հսկողությունը ընթացքում կիրականացվի այն կշռելու միջոցով:

Հորատման հաստոցի տեղակայման համար կբացվի հորատհրապարակ 10մx10մ չափերով, իսկ որպես դրանց մոտեցման ճանապարհներ կօգտագործվեն նախկինում անցած ճանապարհներ, այն մաքրելուց հետո:

Հորատանցքերի հորատումը ավարտելուց հետո հորատբրիգադների ուժերով հորատհրապարակներում կկատարվեն մաքրման և վերականգնման աշխատանքներ:

Հորատված հորատանցքերի հորատանցքաշուրթում հորած սկզբնամասում կտեղակայվեն նշակետեր (ռեպեր), պլաստիկ խողովակի տեսքով, որի վրա նշված կլինի հորատանցքի համարը, դրանց խորությունը, հորատանցման ժամկետը:

Հորատանցքերում գեոֆիզիկական հետազոտումները (ինկլինոմետրիան) կիրականացվի Relex EZ-Trac տիպի ինկլինոմետրի օգտագործմամբ: Չափումները իրականացվելու են յուրաքանչյուր 6 մետրը մեկ, հիմնական չափումների հսկողությունը իրականացվելու է յուրաքանչյուր չորրորդ չափումը հսկողական և կրկնակի չափման միջոցով:

Երկրաբանական փաստագրման տվյալները կմուտքագրվեն փաստագրման էլեկտրոնային շաբլոնի մեջ, որոնցում նշվելու է նաև հորատանցքի անցման խորությունները և կեռնի տեսակը: Համաձայն առանձնացված երկրաբանական միջակայքերի (ինտերվալների) կատարվելու է լիթոլոգիական, տեկտոնական խախտումների երկրորդական փոփոխությունների, հանքայնացման նկարագրությունները: Փաստագրման վերջնական փուլում մակրոսկոպիկ ուսումնասիրություններից հետո կիրականացվի նմուշարկում , նմուշարկելով հորատումից ստացված ամբողջ երկարությամբ՝ անընդմեջ կեռնը ամբողջ երկարությամբ,

երկարությունները կնդունվի յուրաքանչյուր նմուշը վերցված 4մ երկարության կեռնից, նմուշարկումը կատարելով կեռնի ¼ մասից::

- Տեխնոլոգիական նմուշարկմանը անհրաժեշտ հանքաքարի փորձնական հանույթի համար պահանջվող խարամների /տրանշեաների/ անցում

Տեղամասում փորձնական հանույթ կազմակերպելու միջոցով 500տ ընդհանուր քաշով տեխնոլոգիական նմուշ ստանալու նպատակն է, ինչպես մեր հանրապետության, այնպես էլ արտերկրի գիտահետազոտական ինստիտուտներում կազմակերպել հետազոտություններ, լաբորատոր և գործարանային պայմաններում: Բազում փորձերի արդյունքներով ընտրել արդյունավետ տեխնոլոգիա հանքաքարից մաքսիմալ հնարավոր արտադրատեսակներ և նյութեր ստանալու վերաբերյալ, ելնելով դրանց ներկայիս միջազգային շուկայական պահանջարկից:

Ստացված արդյունքները հիմք կհանդիսանա հետագայում կազմելու նախագծային առաջադրանքներ և հիմնավորումներ գործարանային պայմաններում այլումինի օքսիդի, ցեմենտի, նատրիի և կալիի մետասիլիկատների, պոտաշի, տարբեր որակի սիլիկատների և ներկայում պահանջարկի ունեցող այլ նյութերի ստացման հնարավորությունների վերաբերյալ: Այդ ուսումնասիրություններում կընդգրկվի նաև հանքաքարի վերամշակման ժամանակ հազվագյուտ և ցրված տարրերի կորզման հնարավորությունները:

Բացի այդ, ինչպես ցույց են տվել նախորդ ուսումնասիրությունները, Թեժագետի տեղամասի նեֆելինային սիենիտներում բավականին բարձր պարունակությամբ սիլիկատային հողերի առանձնացումը խնդիր է համարվել կիրառելու նախնական հարստացման տեխնոլոգիաներ, որի մշակումը նախորդ ուսումնասիրությունների աշխատանքներով մինչև վերջ չէր հասցվել:

Տեխնոլոգիական նմուշարկմանը անհրաժեշտ ապրանքային հանքաքարի ստացման համար նախատեսվում է կենտրոնական հատվածում I-I և II-II հետախուզագծերի միջակայքի հարավային կոնտակտից 60մ հյուսիս՝ 2440 նիշի վրա /խ N1 և նույն հետախուզագծերի միջին հատվածի հյուսիսային կոնտակտից 120մ հարավ՝ 2475 նիշի վրա /խ3/ երկու խարամների /տրանշեաների/ անցում: Նմանատիպ երկու խարամների անցում է նախատեսված II-II և III-III հետախուզագծերի միջնամասում ԽN4-

ներքին կոնտակտի միջին մասից 70մ հյուսիս-2505 նիշի վրա և ԽN2 վերին կոնտակտի միջին մասից 120մ հարավ՝ 2552 մ նիշի վրա: Յուրաքանչյուրը 5-ական մետր երկարության: Խարամի /տրանշեաի/ խորությունը կստացվի 1.5-3.5մ, միջինը 2,45մ, լայնությունը՝ 4,5մ: Ըստ ծավալի երեք հետախուզագծերի միջնամասից երկուական փորվածքներից հանքաքարի փորձնական հանույթը կկազմի $2,45 \times 4,5 \times 5 \times 4 = 200 \text{ մ}^3$ ծավալի և 2,5 տոննա/ մ^3 տեսակարար կշռի պայմաններում քաշը կկազմի $2.5 \times 500 = 1250$ տոննա: Երկու խրամներում էլ կկատարվեն երկրաբանական փաստագրումներ և նկարագրումներ, ֆոտոհանույթ, քերվածքային նմուշարկում փորվածքի պատից ըստ տարածման ակոսային եղանակով:

**- ՆՍՈՒՇԱՐԿՈՒՄ, ՆՍՈՒՇՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ԼԱԲՈՐԱՏՈՐ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

1 Նմուշարկման աշխատանքներ

Համաձայն 2022-2025թ.թ. երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագրի և ընդերքի ուսումնասիրմանն առընչվող հանրապետությունում գործող հրահանգչական փաստաթղթերի պահանջների Թեժագետի նեֆելինային սիենիտների տեղամասում նախատեսվող մակերևույթից անցած վերականգնվող և նոր անցկացվելիք լեռնային փորվածքներից, հորատումից ստացված կեռնից կվերցվեն նմուշներ, կատարվի դրանց մշակումներ մանրեցման միջոցով, ինչպես նաև քիմիական անալիզներ, կիրականացվի հանրաժեշտ հսկողական, վերլուծական աշխատանքներ:

Քիմիական նմուշարկման է ենթարկվելու հորատվելիք բոլոր տասը հորատանցքերից ստացված կեռնի 100%-ը, բայց յուրաքանչյուր նմուշի երկարությունը՝ 4 մ միջակայքից ընդամենը 503 կեռնային նմուշներ:

Նմուշարկումը կկատարվի կեռնի սղոցմամբ երկու կեսից հետո ևս մի կեսը կիսելու եղանակով՝ Կեռնի միայն $\frac{1}{4}$ մասը օգտագործելով 2 նմուշում: Այս եղանակով կապահովվի կեռնի ամբողջ երկարությամբ նմուշարկումը, բայց կրջատելով քիմիական անալիզների քանակը:

Մակերևույթից անցած նախկին փորվածքներից մաքրումից վերականգնված (հետախուզաառուներից ու շուրֆերից՝ ինչպես նաև մակերևույթից նոր անցած շուրֆերից) կկատարվեն ակոսային նմուշարկում ընդամենը $19+785+15+503=1232$ նմուշ:

Հիմնական հանածոների պարունակությունների որոշման հետ այլումինի օքսիդի, սիլիկահողի, նատրիի և կալիի պարունակությունների որոշման հետ մեկտեղ կկատարվի և 30 մյուս էլեմենտների, այդ թվում հազվագյուտ և ուղեկցող տարրերի պարունակությունը, որը որոշվելու է պլազմայի հետ ինդուկտիվ կապված էմիսիոն սպեկտոսկոպիայի մեթոդով:

Քիմիական նմուշարկում իրականացնելու ընթացքում հիմնականում կօգտագործվեն շարքային կեռնային և ակոսային նմուշների վերցրման ստանդարտ մեթոդիկան:

Հատվածային կեռնային նմուշարկում չի կատարվելու ի նկատի ունենալով հորատման բաժնում և ներկա բաժնում նկարագրված հիմնավորումները:

Նմուշի համար ստացված կեռնի $\frac{1}{4}$ մասը մանրացվելու է մուրճով, մինչև մաքսիմում 5-8 սմ չափերը և տեղակայվելու հատուկ (հանքային) պարկերի մեջ:

Վերականգնված և նոր անցած մակերևույթի լեռնային փորվածքներից ակոսային նմուշարկումը իրականացվելու է ձեռքի ավտոնոմ աշխատող հորատմուրճի միջոցով: Ակոսի կտրվածքը կազմվելու է 5×10 սմ, ընտրվելու է համատարած նմուշարկում, յուրաքանչյուր նմուշի երկարությունը 4մ , այն կատարվելու է նույն սկզբունքով, ինչ օգտագործվել է կեռնի նմուշարկման ժամանակ:


2 Նմուշների նախապատրաստում

Ակոսային նմուշարկման մի մասը նախապատրաստվելու է «Անալիտիկ» ՓԲԸ -ի, մյուս մասը «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ լաբորատորիաների նմուշների մշակման բաժանմունքում: Երկու արտադրամասերում էլ հազեցված են ESSA-Australia ընկերության արտադրության ջարդող-մանրացնող սարքավորումներով:

Նմուշների նախապատրաստման գործընթացում որպես անալոգիա հիմնականում կօգտագործվեն այլումինի հանքաքարերի հետազոտման համար ընդունված ստանդարտ սխեման (նկար 17 նմուշների վերամշակման ընդունված ստանդարտ սխեման): Կիրառված սխեմայի էական առանձնահատկությունը այն է, որ խոշոր

մանրացման փուլից հետո նմուշի կրճատում չի իրականացվել-նմուշի ամբողջ նյութը դիսկերով փոշիացվում է մինչև 200մ (-0.074 մմ):

Նմուշների վերամշակման սխեմա



Նկար 17 Նմուշների վերամշակման ընդունված ստանդարտ սխեման

Թեժասարի նեֆելինային սիենիտների Թեժագետի տեղամասերից վերցրվելիք կեոնային, ակոսային ու համախառն ապրանքային նմուշներում հիմնական կոմպոնենտների պարունակության որոշումները իրականացվելու են <<Լեոնամետալուրգիայի ինստիտուտ>> ՓԲԸ-ի և <<Անալիտիկ>> ՓԲԸ-ի լաբորատորիաներում : Այստեղ կատարվելու են նաև ուղեկցվող, հազվագյուտ և ցրված տարրերի պարունակությունների որոշումը:

Նմուշների ներքին երկրաբանական հսկողությունը իրականացվելու է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության <<Անալիտիկ>> ՓԲԸ-ում: Արտաքին հսկողության նմուշների պարունակությունների որոշումը կկազմակերպվի ՌԴ արտերկրների սիենիտներից այլումինի օքսիդ ստանալու պրակտիկ գործունեությամբ զբաղվող ձեռնարկությունների լաբորատորիաներում, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հսկողության մեջ կներառվի նմուշների ամբողջ քանակի 15%-ը:

- ՀԱՆՔԱՔԱՐԻ ԾԱՎԱԼԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾԻ ՈՐՈՇՈՒՄ

Հանքերնակման հանքաքարի ծավալային զանգվածն անհրաժեշտ է որոշել ըստ հանքաքարի տարատեսակների, տեղամասի տարբեր մասերից, տարբեր խորություններից նույն նմուշներով որոշելով հանքերնակման խոնավության չափը:

Նմուշները պետք է ենթարկվեն միներալոգիական հետազոտման և պարզել դրանցում առկա հիմնական տարրերի քանակը:

Նախատեսվում է հետազոտման ենթարկել 18 մենաքարային և 3 համախառն նմուշ:

- ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՓՈՐՎԱԾՔՆԵՐԻ ՓԱՍՏԱԳՐՈՒՄ

- **Մակերևութից անցած լեոնային փորվածքների երկրաբանական փաստագրում**

Ծրագրով նախատեսվում է կատարել մարկշեյդերական և գեոդեզիական աշխատանքներ լեոնային փորվածքների տեղակապումը տեղանքի հետ կապելու հանքային մարմինների լինզաձև շտոկի չափադրում (անկումը, ուղղությունը, հզորությունը և այլն), նմուշարկումը, նմուշների փաստագրումը, հանքային փորվածքների պատկերագրումը, նմուշարկման կետերի փաստագրումով, տեղայնական քարտեզների պլանների վրա բոլոր փորվածքների տեղադրումը, նմուշարկման

մատյանների վարումը: Այն կազմվելու է որպես առաջնային նյութ թվայնացված ծրագրերում օգտագործվելու նպատակով: Փաստագրվելու է 3140գձ.մ մագիստրալային հետախուզատուններ, 34.0 գձ.մ հետախուզահոր, 2010.0 գձ.մ հորատանցք:

- **Երկրաֆիզիկական հետազոտություններ**

Նախատեսվում է կատարել

- Հորատանցքերում գամմա կարոտաժ-7150 գձ.մ
- Փորվածքների ռադիոչափական հետազոտություններ

- **ՀԻՂՈՆԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՆՃԵՆԵՐԱ-ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

Զնայած նախկին աշխատանքներով տեղամասի ապարներում ստորգետնյա ջրի առկայություն չի հայտնաբերվել, այնուամենայնիվ նախատեսվում է հորատանցքերով կատարել դիտարկումներ ջրաբքի հորիզոնների առկայությունը պարզելու նպատակով, միաժամանակ ուսումնասիրելով ջրի որակը, կատարել հանքներփակող ֆիզիկա-մեխանիկական հատկությունների ուսումնասիրություններ:

- **ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

- **Տոպո-գեոդեզիական աշխատանքներ**

Նախատեսվում է հետախուզափորվածքների քարտեզագրում և բոլոր փորվածքների մարկշեյդերական սպասարկում ամբողջ աշխատանքների տևողության ընթացքում

- **Տեխնիկա-տնտեսական հաշվարկների կազմում**

Նախագծով նախատեսված երկրաբանա-հետախուզագնահատողական աշխատանքներն ավարտելուց հետո օգտակար հանածոյի հնարավոր արդյունաբերական պաշարները գնահատելու նպատակով տեխնիկա-տնտեսական հաշվարկների և հիմնական կոնդիցիաների կազմում: Այն իր մեջ կնարառի ընդերքում հումքի որակի և տեղամասի հնարավոր շահագործման պայմանների պահանջները, կորոշի մի շարք սահմանային ցուցանիշներ, հանքային մարմնի շրջագծման, ամփոփելու ընդհանրապես այն արդյունաբերական, ոչ արդյունաբերական հաշվեկշռային, ոչ հաշվեկշռային գնահատելուն տեխնիկատնտեսական ներկա հաշվարկներից ելնելով կկազմվի նոր կոնդիցիաներ:

- **Հաշվետվության կազմման աշխատանոցային աշխատանքներ**

Աշխատանոցային աշխատանքների ընթացքում կկատարվի ամբողջ փաստացի նյութի ընդհանրացումը և համակարգումը, երկրաբանական հաշվետվության կազմումն իր համապատասխան ներդիր քարտեզներով, հատակագծերով, կտրվածքներով և այլն: Թեժասարի տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների հաշվարկի համար հաշվարկված և հաստատված նոր կոնդիցիաների հիման վրա կվերանայվի և հաստատման կներկայացվի նոր պաշարների հաշվարկ:

ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՅԻԱ

Չնայած նախորդ աշխատանքների նկարագրություններով տեղամասում իրականացվող հիմնական հետախուզական փորվածքների տեղակայման վայրերը ամբողջությամբ մերկացված է և բացակայում է մակերեսային հողային ծածկույթ, այնուամենայնիվ թեկուզ փոքր հատվածներում դրա առկայության դեպքում հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հետախուզաառուների, հետախուզահորերի, հորատհարթակների կառուցման ընթացքում հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերանորոգման նպատակով ծածկել հողաշերտով:

Ընդհանուր հողային աշխատանքների, ռեկուլտիվացիայի գումարը՝ 5.527.500 ՀՀ դրամ ներառվել է հայտի նախահաշվի 14-րդ տողում:

Նախահաշվում ներառված է նաև աշխատանքների կատարման ժամանակացույցը՝ ըստ տարիների և եռամսյակների:

Հորատ հրապարակները կառուցվելու են 10մ x 10մ չափերով = 100քմ մակերեսի՝ մերկացված-հողմնահարված տարածքների վրա, որի ծավալը կկազմի 100քմ x 0.1մ = 10.0իւմ հողային աշխատանքներ, որտեղ 0,1մ դա թեքությունների դեպքում հրապարակների միջին խորությունն է: 10 հրապարակի համար հողային աշխատանքների ծավալը կկազմի 10.0իւմ x 10հրապարակ = 100իւմ: Հորատ հրապարակների ընդհանուր մակերեսը կկազմի 100քմ x 10 = 1000քմ:

3140 գծ.մ. մագիստրալային 10 հետախուզաառուների վերականգման աշխատանքների ժամանակ հողային աշխատանքների ծավալը կկազմի 1500իւմ, մակերեսը՝ 2512քմ:

Նոր 15 շուրֆերի անցման ծավալը կկազմի 18,75իւմ, մակերեսը՝ 15x1.5=22.5քմ: Նախկինում անցած 19 շուրֆերի վերականգման ծավալը կկազմի 23,75իւմ, մակերեսը՝

19x1.5=28.5քմ, իսկ 4 տրանշեաների հողային աշխատանքների ծավալը կկազմի 200իւմ, մակերեսը՝ 5մx4.5x4= 90քմ: Ընդհանուր հողային աշխատանքների ծավալը կկազմի 1842.5իւմ, տարածքի մակերեսը՝ 2341քմ: Ռեկալտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 1842.5x3000=5527500 ՀՀ դրամ:

Խմբագրվել է Նախահաշվում 225,6 միլիոն դրամ ընդհանուր գումարը և այն կազմում է 231,1մլն ՀՀ դրամ /225,6+5,527=231,1մլն ՀՀ դրամ/:

***Տեղեկատվություն Հայցվող տարածքի սահմաններում նախկինում
կատարված աշխատանքների վերաբերյալ***

ԽՍՀՄ երկրաբանության և ընդերքի պահպանության նախարարության ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդին կից երկրաբանության և ընդերքի պահպանության վարչության կողմից 1957-1958թթ տեղամասում իրականացված մանրամասն երկրաբանական աշխատանքների արդյունքներով Յ. Ս. Այվազյանի և Ռ. Ա. Մկրտչյանի կողմից 1959թ կազմված Թեժագետի տեղամասի նեֆելինային սիենիտների պաշարների հաշվարկով Երկրաբանական հաշվետվության մեջ /Հայկական Երկրաբանական ֆոնդ, գույք N0394/ մանրամասն տրված է պաշարների հաշվարկում հողաբուսական շերտի բացակայության մասին: Հաշվետվության էջ 162-ում և 228-ում նշված է <<Թեժագետի տեղամասում ժամանակակից նստվածքաշերտը համարյա ամբողջությամբ բացակայում է: Շրջանի ռելիեֆը համարյա զրկված է ծածկող նստվածքներով /էյլովիալ և դէյլովիալ շերտերից>>: Ինչ վերաբերում է էջ 66-ում նշված հողի շերտին, ապա ձևակերպումը հետևյալն է. <<Չնայած նախորդ աշխատանքների նկարագրություններով տեղամասում իրականացվող հիմնական հետախուզական փորվածքների տեղակայման վայրերը ամբողջությամբ անցել են մերկացված արմատական ապարներով և բացակայում է մակերեսային հողային ծածկույթ, այնուամենայնիվ թեկուզ փոքր հատվածներում դրա առկայության դեպքում հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հետախուզաառուների, հետախուզահորերի, հորատհարթակների կառուցման ընթացքում հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով>>:

Թեժագետի տեղամասում 1957-58թթ. իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակը եղել է՝ որոշելու օգտակար հանածոյի (Նեֆելինով հարուստ

սիենիտների) քանակը, որակը, տեղակայման պայմանները և ձևը: Հանքավայրը հետախուզվել է հորատանցքներով, հետախուզաառումներով և հետախուզահորերով (շորֆերով):

Մակերեսից անցած լեռնային փորվածքները տեղակայվել են զուգահեռ կտրվածքների գծերով, նեֆելինով հարուստ սիենիտների ընդհանուր տարածմանը խաչաձև:

Հանքային մարմնի հզորությունը որոշելու համար անցել են 10 մագիստրալային հետախուզաառումներ, իրարից 180-200 մինչև 400-600մ հեռավորության զուգահեռ գծերով, ընդհանուր երկարությունը 3212գծ.մ: Առանձին տեղամասերում մակերեսից որոշ խորություն ուսումնասիրելու համար փորվել են հետախուզահորեր: Հետախուզագծերում դրանց հեռավորությունը իրարից եղել է 25-60 մինչև 200-300մ: Առավել խորը հորիզոնում նեֆելինով հարուստ սիենիտների ուսումնասիրության համար հորատվել են 9 հորատանցքեր, 62 մ-ից 212մ խորությամբ: Նույն հետախուզագծերում հորատանցքերի տեղակայումը իրարից հեռու է եղել 108մ-ից 265մ:

Տեղամասում անցած 10 մագիստրալային հետախուզաառումների ընդհանուր երկարությունը կազմել է 3213 գծ.մ. մակերեսը՝ 2570.4քմ, ծավալը՝ 3535.6խմ:

Փորվել են 28 հետախուզահորեր (շորֆեր) ընդհանուր 230.05գծ.մ., մակերեսը՝ 420քմ, ծավալը՝ 345խմ:

Տեղամասում հորատվել էր 9 հորատանցքեր 1307.9 գծ.մ. ընդհանուր երկարությամբ:

Այսպիսով, 0.83քկմ տարածքի վրա անցած այս փորվածների համար ժամանակին կատարվել էին դրանց մոտեցման դաշտամիջյան ճանապարհների անցում՝ քերելով հողմնահարված և մերկացված բլրի ոչ մեծ թեքության լանջը:

Ներկայում ճանապարհները կարող են կրկին անցանելի լինել որոշ քարաթափումներ մաքրելու միջոցով: Ժամանակին մակերևույթից անցած լեռնային փորվածքները նմուշարկումից հետո ռեկուլտիվացվել և հողի ետ լիցք է կատարվել: Անցած 60-ից ավելի տարիների ընթացքում դրանք հավասարեցվել են լանջի մակերևույթին համահավասար և դրանց տեղակայման իրական վայրերը դժվար է վերականգնել: Այն ներկայումս կիրականացվի միայն գեոդեզիական հանույթի ու գործիքային չափումների միջոցով:

Ներկա ծրագրով նախատեսված մակերևույթից անցնելիք փորվածքների վերականգման աշխատանքները ընդգրկում են միայն նախկինում անցած ծավալների կեսը:

Նախկինում կատարված աշխատանքների մեթոդիկան և տեխնոլոգիան այնպիսին են եղել /ձեռքով իրականացվել են հողային աշխատանքներ՝ բացվել են հետախուզաառումներ և հորեր նմուշարկումից ու փաստագրումից հետո և կատարվել է հետլիցք/, որ հողերի և գրունտների որևէ աղտոտվածության չէր կարող հանգեցնել:

Նախկինում կատարված աշխատանքների ծավալները / Խախտված և վերականգնված հողերի վերաբերյալ/

Թեժագետի տեղամասում 1957-58թթ.. իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակը եղել է որոշելու օգտակար հանածոի (Նեֆելինով հարուստ սիենիտների) քանակը, որակը, տեղակայման պայմանները և ձևը: Հանքավայրը հետախուզվել է հորատարածքներով, հետախուզաառումներով և հետախուզահորերով (շուրֆերով):

Մակերեսից անցած լեռնային փորվածքները տեղակայվել են զուգահեռ կտրվածքների գծերով, նեֆելինով հարուստ սիենիտների ընդհանուր տարածմանը խաչաձև:

Հանքային մարմնի հզորությունը որոշելու համար անցել են 10 մագիստրալային հետախուզաառումներ, իրարից 180-200մ-ի նչև 400-600մ հեռավորության զուգահեռ գծերով, ընդհանուր երկարությունը 3212գծ.մ. ծավալով: Առանձին տեղամասերում մակերեսից որոշ խորություն ուսումնասիրելու համար փորվել են հողահորեր: Հետախուզագծերում դրանց հեռավորությունը իրարից եղել է 25-60 մ-ի նչև 200-300մ: Առավել խորը հորիզոնում նեֆելինով հարուստ սիենիտների ուսումնասիրության համար հատկացվել է 9 հողատարածքներ, 62 մ-ից 212մ խորություն: Նույն գծում հողատարածքների տեղակայումը իրարից հեռու է եղել 100մ-ից 265մ:

Տեղամասում անցած 10 մագիստրալային հետախուզաառումների ընդհանուր երկարություն կազմել է 3213 գծ.մ. մակերեսը՝ 2570.4քմ, ծավալը 3535.6խմ:

Տրվել էր 28 հետախուզահորեր (շուրֆեր) ընդհանուր 230.05գծ.մ., մակերեսով 420քմ, ծավալը՝ 345խմ:

Տեղամասում հորվել էր 9 հորատարածք 1307.9 գծ.մ. ընդհանուր խորությամբ:

Այսպիսով 0.83քկմ տարածքի վրաանցած այս փորվածքների համար ժամանակին կանխել էին դրանց մոտեցման դաշտամիջի ճանապարհներ, բերելով հողմահարված և մերկացված բլրի ոչ մեծ թեքաընթացքը:

Ներկայում ճանապարհները կարող են անցանելի լինել որոշ քարաթափումներ մաքրելու միջոցով: Մակերևույթից անցած լեռնային փորվածքները նմուշարկումից հետո ռեկուլտիվացվել և հողի ետ լիցք է կատարվել: Անցած 60-ից ավել տարիների ընթացքում դրանք հավասարեցվել են լանջի մակերևույթին և դրանց տեղակայման վայրերը դժվար է կողմնորոշել: Այն կիրականացվի միայն գեոդեզիական հանույթի ու չափումների միջոցով:

Ներկա ծրագրով նախատեսված մակերևույթից անցած փորվածքների վերականգման աշխատանքները ընդգրկում են միայն նախկինում անցած ծավալների կեսը:

Աղյուսակ 1

Անփոփ աղյուսակ ուսումնասիրության ծրագրով նախատեսված երկրաբանա-հետախուզական աշխատանքների, ֆիզիկական ծավալների								
N/N	Նախատեսված աշխատանքների անվանումը	Հետախուզագծի համար NN	Ը/հ	Փորվածքի NN	Չափի միավորը	Աշխատանքի ֆիզիկական ծավալը	Փորվածքից վերցվելիք նմուշների քանակը	Այլ տվյալներ
1	2	3	4	5	6	7	8	9
1	նախկինում անցած շուրֆերի վերականգնում	II-II	1	N12	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
			2	N3	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
			3	N2	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
		III-III	1	N5	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
			2	N13	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
			3	N4	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
		IV-IV	1	N7	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
			2	N6	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
		V-V	1	N9	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
			2	N8	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
		VI-VI	1	N11	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	
			2	N10	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1	

			1	N15	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
		VII-VII	2	N14	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
		VIII-VIII	1	N18	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
			2	N21	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
		IX-IX	1	N23	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
			2	N25	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
		X-X	1	N27	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
	Ընդամենը					19/23.75	19
2	նախկինումանց ած հետախուզաառ ուների վերականգնում	I-I	1	N1	զծ.մ/խոր.մ	240/105.6	60
		II-II	1	N2	զծ.մ/խոր.մ	340/153.6	85
		III-III	1	N3	զծ.մ/խոր.մ	340/153.6	85
		IV-IV	1	N4	զծ.մ/խոր.մ	430/196.8	107
		V-V	1	N5	զծ.մ/խոր.մ	340/153.6	85
		VI-VI	1	N6	զծ.մ/խոր.մ	380/172.8	95
		VII-VII	1	N7	զծ.մ/խոր.մ	370/168.0	93
		VIII-VIII	1	N8	զծ.մ/խոր.մ	220	55
		IX-IX	1	N9	զծ.մ/խոր.մ	180	45
		X-X	1	N10	զծ.մ/խոր.մ	300	75
	Ընդամենը					3140/1507.2	785
3	Նոր Շուրֆերի անցում		1	N20	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
		I-I	2	N21	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
			1	N22	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
		II-II	2	N23	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
			1	N24	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1
		III-III	2	N25	զծ.մ/խոր.մ	1.0/1.25	1

			1	N26	զծ.ւ/խոր.ւ	1.0/1.25		1	
		IV-IV	2	N27	զծ.ւ/խոր.ւ	1.0/1.25		1	
		V-V	1	N28	զծ.ւ/խոր.ւ	1.0/1.25		1	
			2	N29	զծ.ւ/խոր.ւ	1.0/1.25		1	
			3	N30	զծ.ւ/խոր.ւ	1.0/1.25		1	
		VI-VI	1	N31	զծ.ւ/խոր.ւ	1.0/1.25		1	
			2	N32	զծ.ւ/խոր.ւ	1.0/1.25		1	
		VII-VII	1	N33	զծ.ւ/խոր.ւ	1.0/1.25		1	
			2	N34	զծ.ւ/խոր.ւ	1.0/1.25		1	
	Ընդամենը					15/18.75		15	
4	Հորատանցքերի հորատում	I-I	1	N10	զծ.ւ		120	30	
		II-II	1	N11	զծ.ւ		190	48	
			2	N12	զծ.ւ		200	50	
		III-III	1	N13	զծ.ւ		200	50	
			2	N14	զծ.ւ		220	55	
		IV-IV	1	N15	զծ.ւ		200	50	
			2	N16	զծ.ւ		240	60	
		V-V	1	N17	զծ.ւ		220	55	
		VI-VI	1	N18	զծ.ւ		220	55	320/45
2	N19		զծ.ւ		200	50	70		
	Ընդամենը					2010	503		
5	Տրանշեախանցում	I-I- II-II	3,1	2440,2475	խոր. ւ		100		250կգ
		II-II-III-III	4,2	2500,2550	խոր. ւ		100		250կգ
	Ընդամենը					200		500կգ	

Ընդամենը քիմ. անալիզի ենթակա նմուշներ

1322
5 տեխ. նմուշ 500կգ

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

3.1. Ենթակառուցվածքներ

Ինչպես արդեն նշվել է, ուսումնասիրվող տարածքը վարչական առումով մինչ 2021թ. դեկտեմբեր ամիսը ընդգրկված էր ՀՀ Կոտայքի մարզի տարածքում՝ Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական սահմաններում: ՀՀ օրենսգրքի համաձայն 2021թ. դեկտեմբերից հետո ընդգրկվել է մարզի Ծաղկաձոր խոշորացված համայնքի կազմը:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա: Ըստ 2021 թվականի հողային հաշվեկշռի տվյալների՝ ՀՀ Կոտայքի մարզի վարչական տարածքի մակերեսը 209,223.2 հա (2,092.23 քառ. կմ) է, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության՝ 155,070.7 հա (որից 37,264.4 հա վարելահող, 79,406.1 արոտավայրեր), անտառային՝ 22,898.9 հա: Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին: Մարզն ընդգրկում է երեք տարածաշրջաններ՝ Հրազդանի, Արավյանի և Նաիրիի: Համայնքների թիվը 67 է, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60: Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների պաշարներով: Առկա են ոսկու, ալյումինի, պղինձ- մոլիբդենի, երկաթի, պեռլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելինային սիենիտների, անդեզիտաբազալտների, հրաբխային խարամների, քարաղի, զանազան շինարարական նյութերի հանքավայրեր: Մարզում առկա են հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրեր՝ Բջնիի, Արզնիի և Հանքավանի, որոնք բուժական նպատակներով օգտագործելու մեծ հնարավորություններ ունեն: Նշված հանքավայրերից առաջին երկուսը շահագործվում են թերձանրաբեռնվածությամբ, իսկ Հանքավան հանքային ջրի նկատմամբ դեռևս հետաքրքրություն չկա:

Կոտայքի մարզում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սողանքները, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացած ջրհեղեղները, քարաթափվածքները, ուժեղ քամիները, կարկուտը, ցրտահարությունը, մերկասառույցը, ձնաբուքը, մառախուղը, երաշտները և անտառային հրդեհները: Մարզի տարածքում ավտոճանապարհներին սպառնացող քարաթափումները գտնվում են Երևան-Սևան մայրուղու 37-րդ կմ, Հրազդան-Բջնի, Չարենցավան-Արզել, Արզնի-Նոր Գեղի, Ողջաբերդ-Գառնի-Գեղարդ հատվածներում,

առկա սողանքային գոտիներից առավել ակտիվ և վտանգավոր գոտիները գտնվում են հիմնականում Ողջաբերդի, Հացավանի, Հանքավանի տարածքներում:

Կոտայքի մարզի մշտական բնակչությունը կազմում է 253900 մարդ /2016թ. հունվարի 1-ի տվյալներով/, որից՝ քաղաքային՝ 137900 մարդ (54,3%), գյուղական՝ 116000 մարդ (45.7%): Մարզի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 8.5%-ը: Ազգաբնակչության 97,6 %-ը հայեր են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ, ասորիներ, քրդեր, հույներ:

Մարզի մշտական բնակչության 48.2%-ը կազմում են տղամարդիկ, 51.8%-ը՝ կանայք: Մարզի բնակչության մեջ գերակշռում են 30-62 տարեկանները (44.8 %), ընդ որում տղամարդիկ կազմում են 43.4%, կանայք՝ 46.1%, իսկ երիտասարդները (15-29 տարեկան) կազմում են ազգաբնակչության 23.3%-ը, համապատասխանաբար՝ տղամարդիկ՝ 24.3 %, կանայք՝ 22.4 %:

Կոտայքի մարզի բնակչության կրթական մակարդակն ունի հետևյալ պատկերը՝ բարձրագույն կրթություն ունեցողներ՝ 15,6%, միջին մասնագիտական՝ 15,6%, նախնական մասնագիտական՝ 4,5%, միջնակարգ՝ 37,6%, հիմնական՝ 12,5%, տարրական՝ 8,7% և չունի տարրական կրթություն՝ 5,5%: Քաղաքներում գյուղերի համեմատաբար բարձր է բարձրագույն կրթության մակարդակը՝ 66%-ով, միջին մասնագիտական կրթության մակարդակը՝ 60%-ով:

Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնական մասում, սահմանակից է 5 մարզերի և Երևան քաղաքի հետ, մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք հեռավորությունն ընդամենը 50 կմ է: Մարզով են անցնում Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման և Բալասոփո-Մասիս (Երևանը շրջանցող) միջպետական ճանապարհները (56.18կմ): Մարզի տարածքով են անցնում Երևան-Սևան-Շորժա (68 կմ) և Հրազդան-Իջևան (20 կմ) երկաթուղիները:

Մարզի ավտոճանապարհներին զգալի է նաև տարանցիկ երթուղիների թիվը: Մարզում բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի միջոցով: Ավտոմոբիլային փոխադրումները մարզում կազմում են ընդհանուր փոխադրումների շուրջ 95%-ը, ինչով և պայմանավորված է ավտոմոբիլային ճանապարհների գերակա դերը տնտեսությունում:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «ԱրմենՏել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվասել/ՄՏՍՍ ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Մարզում լարային հեռախոսակապ ապահովում են ԱրմենՏելը և Ռոստելեկոմը՝ 48 համայնքներում: Մարզի բնակավայրերում գործում են «Հայփոստ» ՓԲԸ-ի 66 փոստային բաժանմունքներ:

Մարզի բոլոր համայնքների բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով ընդունելու 10-ից ավելի հեռուստաալիք: Գործում է Կոտայք TV մարզային հեռուստաընկերությունը: Մարզի ամբողջ տարածքն ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև Հանրային ռադիոն, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի համայնքներում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից, կապտաժներից՝ ինքնահոս և մեխանիկական եղանակներով: Չնայած կատարված աշխատանքներին, կան դեռևս լուծում պահանջող հիմնախնդիրներ՝ Լեռնանիստ համայնքը չունի ջրամատակարարման ցանց:

Մարզի 29 համայնքներում գոյություն ունեն կոյուղու հեռացման գործող համակարգեր, որոնք սպասարկում են մարզի բնակչության 53%-ին: Ներկայումս մարզի կոյուղու համակարգ ունեցող բոլոր բնակավայրերի կոյուղագծերը գտնվում են անմխիթար վիճակում և միացված են հոսող գետերին, ջրամբարներին:

Հրազդանի տարածաշրջանում առկա է կեղտաջրերի մաքրման չգործող կայան, որը մինչև 1992թ-ը իրականացրել է Ծաղկաձորի, Հանքավանի և Հրազդանի կոյուղաջրերի կենսաբանական մաքրում:

Մարզով են անցնում մագիստրալ գազատարեր, առկա են գազի ստորգետնյա պահեստարաններ: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի 67 համայնքներից գազաֆիկացված է 62-ը, որտեղ բնակվում են մարզի բնակչության 98,6%-ը: Գազաֆիկացված չեն Հանքավան, Սևաբերդ, Ողջաբերդ, Սարալանջ, Բուժական համայնքները, այս համայնքներում բնակվում են մարզի բնակչության 1,4%-ը: Նշված համայնքներից Հանքավան համայնքի գազաֆիկացումը կնպաստի Հանքավանի

ջրամբարի հարակից և համայնքի տարածքներում առկա հանգստյան տների, առողջարանների բաշխիչ ցանցի միագիծ երկարությունը կազմում է 1051 կմ:

3.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Հայցվող հողամասերը ընդգրկվում են ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական սահմաններում: Նշված հողամասերը համադրվում են պետական սեփականություն հանդիսացող 3 միավոր հողամասերի հետ :

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-328-Ն) համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքը որպես բնակավայր ընդգրկվել է ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կազմում:

Ուսումնասիրվող տարածքը ներառված է Մեղրաձոր խոշորացված համայնքի վարչական տարածքում:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 9-ի ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Հանքավան, Մարմարիկ համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Մեղրաձոր համայնքը:

Մեղրաձոր համայնքը մարզկենտրոնից գտնվում է 15կմ, մայրաքաղաքից 60 կմ հեռավորության վրա: Նախկին Մեղրաձոր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Գոռգոչ, Հանքավան, Մարմարիկ, Փյունիկ գյուղերը: ՀՀ օրենքի համաձայն համայնքը 2021թ. դեկտեմբեր ամսից ընդգրկվել է մարզի Ծաղկաձոր խոշորացված համայնքի կազմ: Համայնքի բնակավայրերում զբաղվում են գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Համայնքի բնակավայրերը շրջապատված են անտառներով: Անտառները հարուստ են պտղատու և դեկորատիվ ծառատեսակներով, հատապտուղներով, մեղրատու թփաբույսերով և բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսերով:

Նախկին Մեղրաձոր համայնքի բնակավայրերում կա եկեղեցիներ և բազմաթիվ խաչքարեր:

Նախկին Մեղրաձոր համայնքը բարենպաստ պայմաններ ունի զբոսաշրջության զարգացման համար և իր կանաչապատ, հարուստ բնությամբ միջտ էլ գրավել է բոլորի ուշադրությունը:

ՄԵՂՐԱՁՈՐԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱՅՆՔ

Մակերես՝ 380կմ²

Բնակչություն՝ 5741

Նախկին Մեղրաձոր համայնքում ընդգրկվել են հետևյալ բնակավայրերը՝

Աղավնաձոր

Արտավազ

Հանքավան

Մարմարիկ Գոռզոչ

Փյունիկ

ՆԱԽԿԻՆ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

Նախկին Մեղրաձոր համայնքը մարզկենտրոնից գտնվում է 15կմ, մայրաքաղաքից 60կմ հեռավորության վրա: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 9-ի ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Հանքավան, Մարմարիկ համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Մեղրաձոր համայնքը: Մեղրաձոր համայնքը բազմաբնակավայր համայնք է: Մեղրաձոր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Գոռզոչ, Հանքավան, Մարմարիկ, Փյունիկ գյուղերը: Համայնքի կենտրոնն է հանդիսանում Մեղրաձոր գյուղը: Համայնքի բնակավայրերում զբաղվում են գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Համայնքի բնակավայրերը շրջապատված են անտառներով: Անտառները հարուստ են պտղատու և դեկորատիվ ծառատեսակներով, հատապտուղներով, մեղրատու թփաբույսերով և բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսերով: Մեղրաձոր համայնքի բնակավայրերում կա եկեղեցիներ և բազմաթիվ խաչքարեր:

Նախկին Մեղրաձոր համայնքը բարենպաստ պայմաններ ունի զբոսաշրջության զարգացման համար և իր կանաչապատ, հարուստ բնությամբ միջոտ էլ զրավել է բոլորի ուշադրությունը:

Նախկին Մեղրաձոր համայնքի բնակավայրերի վարչական տարածքի, առկա և մշտական բնակչության, տնային տնտեսությունների ցուցանիշները Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Զովաբեր, Հրազդան, Չարենցավան, Ծաղկաձոր համայնքներին և ՀՀ Արագածոտնի, Տավուշի և Լոռու մարզերին:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մեղրաձորը սարերի, ձորերի, կարկաչուն աղբյուրների, ու թավուտ անտառների գյուղ է: Գորշ են սարերը, գորգանման անտառները, անտառամերձ գոտու և տեսարժան վայրերի առկայությունը տալիս է տուրիզմի զարգացման հնարավորություն: Գյուղը գտնվում է Փամբակի և Ծաղկունյաց լեռնազանգվածների հովտում, Մարմարիկ և Մեղրաձոր գետերի /Հրազդանի աջակողմյան վտակներ/ դելտայում, ծովի մակերեսից 1800մ բարձրության վրա: Փամբակի հարավահայոց լանջերը լերկ են, ժայռոտ ու կտրտված: Լանջերի ընդերքը հարուստ է ոսկով, պղնձով և նեֆելինային սիենիտների 18 քիմիական նյութերով, այլումինը գերակշիռ է: Մեղրաձորում գործում է ոսկու հանքը 1987թվականից:

Համայնքի պատմական անվանումներից է Թեժառույք և Թայչարուխ: Թեժառույք կոչվել է անտիկ ժամանակներից մինչև 17-րդ դարի սկիզբը Մարմարիկ Մեղրաձոր թեժ գիծ արագահոս գետերի դելտայում գտնվելու համար: Անվան արմատներն են <<Թեժ>> և <<Առու>> բառերը: Թայչարուխ կոչվել է 17-րդ դարի կեսերից մինչև 1946թ: Պարսից Աիրգունա-խանը դեպի Թուրքահայաստան մի քանի արշավանք է կատարել և մուսուլման բնակչությանը բռնագաղթեցրել անմարդաբնակ հայկական տարածքներ: Թեժառույքում հաստատվել են թուրք-կարակալպակներ, որոնք էլ նոր բնակավայրին տվել են իրենց հնչմամբ Թայչարուխ անունը: Անունն առաջացել է թուրքերեն <<Թայ>>-գույգ և <<Չայ>>-գետ բառերի բարդացումից, որ նշանակում է գույգ գետերի արանքում գտնվող բնակավայր: Գյուղը հիմնադրվել է 1830 թվականին: Գյուղը հայերով կրկին վերաբնակեցվել է 1830 թվականի մայիսին տաճկահայաստանի Բայազետի փաշայության Արծափ գյուղից

Մեղրաձոր- ՀՍՍՀ գերագույն խորհրդի 30.05.1946թ. որոշմամբ, ի թիվս հանրապետության բազում այլ բնակավայրերի, Թայշարուխը վերանվանվեց Մեղրաձոր: Համայնքում առկա է թվով վեց բազմաբնակարան շենքեր, 154 բնակարանով, որում ապրում են հիմնականում դրսեկ հայեր, և 25 ծուխ Ադրբեջանից փախստական հայեր: Գյուղում գործում են հիմնանորոգված դպրոցը 360 աշակերտով, 33 ուսուցչով, մանկապարտեզը՝ 12 հաստիքով 63 երեխայով, մարզամշակութային կենտրոնը՝ 12 հաստիքով, որտեղ գործում է դաշնամուրի, դուդուկի, դիոլի, պարի, ձյուղո ըմբշամարտի խմբակներ, որտեղ հաճախում են 100 աշակերտ: Գյուղապետարանի աշխատակամը 13 հաստիք, որից քաղաքական պաշտոն՝ 1 համայնքի ղեկավար՝ հայցողական պաշտոններ 2, համայնքային ծառայողներ 5, տեխնիկական սպասարկողներ 5: Գործում է կապիտալ նորոգված բժշկական ամբուլատորիան 15 հաստիքով, 2 բժիշկներով:

Գյուղը տվել է գիտության նվիրյալներ 10 գիտնական, որոնցից 4-ը դոկտորի, 6-ը գիտության թեկածուի գիտական աստիճան ունեն, 2-ը պրոֆեսորի կոչումով: Գյուղի դիմաց, Չկմ անտառապատ մի հրվանդանի վրա 1190-ականներին վրացահայ իշխան-գորավար Իվանե Զաքարյանի պատվերով կառուցվել է կաթոլիկ վանք, որը վնասվածքով կանգուն է մինչ օրս: Գյուղամիջում է սուրբ Աստվածածին եկեղեցու 2 շենքը /առաջինը փայտածածկ մատուռ է եղել/, որը կառուցվել է 1881թ. և գործել է մինչև 1931թ.: 70 տարի շարունակ նպատակին չի ծառայել, հետո համայնքի ղեկավարի օգնությամբ, բարերարների նվիրատվությամբ և համայնքի բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել և օծվել է 2011թ հոկտեմբերի 15-ին: Գյուղում բնակեցված է 60 տոհմ ու տոհմաճյուղ: Գրվել է 24-ի համառոտ պատմությունը, կազմվել է տոհմաճառը: Գյուղը տվել է Մեծ հայրենականում 186, Արցախի հերոսամարտում 10 զոհ: 1980 թվականներին կառուցվել է Մեծ հայրենականում զոհվածների հուշարձան, որը դարձավ ոչ միայն խնկարկելի սրբավայր, այլ նաև ուխտատեղի:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են

Մեղրաձոր համայնքի բնակիչներին: Նախնական գնահատման հայտին կից տրամադրվում է նաև հանրային քննարկումների արձանագրությունը:

3.3. Պատմության, մշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N1793-Ն և 2007 թվականի մարտի 15-ի N 385-Ն որոշումներով հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Ստորև ներկայացվում է Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թվականին հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 57 հուշարձան (11 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Ամրոց	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ հվ-աե
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցից 0.5 կմ հվ-ամ
Ամրոց	Ք.ա. 2 հազ. միջնադար	գյուղից 1 կմ հս «Բերդիգլուխ» բարձունքի վրա
Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.	
Եկեղեցի	միջնադար	ամրոցի տարածքում
Գերեզմանոց	միջնադար	
Գլխատուն	19 դ. վերջ	գյուղի մեջ
Գյուղատեղի	միջնադար	գյուղից 4 կմ հս-աե
Գերեզմանոց	միջնադար	

Մատուռ Կարմիր խաչ	միջնադար	
Խաչքար	9-10 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	15 դ.	
Խաչքար	15 դ.	
Գյուղատեղի	միջնադար	գյուղի 1.5 կմ հս-աե
Մատուռ	12-13 դդ.	«Ռնդամալի» վայրում
Գերեզմանոց	միջնադար	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12-13 դդ.	
Դամբարաններ	Ք.ա. 14-9 դդ.	գյուղի տարածքում
Եկեղեցի Սուրբ Աստվածածին	1881 թ.	գյուղում
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Գերեզմանոց	7-19 դդ.	Եկեղեցուց 90 մ աե
Խաչքար	10 դ.	
Խաչքար	10-11 դդ.	

Խաչքար	10-11 դդ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	1224 թ.	
Խաչքար	13-14 դդ.	
Խաչքար	13-14 դդ.	
Խաչքար	14-15 դդ.	
Խաչքար	14-15 դդ.	
Խաչքար	14-15 դդ.	
Խաչքար	19 դ.	
Եկեղեցի	միջնադար	գյուղից 10 կմ հս, «Ղարոյիգոմեր» վայրում
Գերեզմանոց	միջնադար	
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1985 թ.	գյուղում
Մատուռ «Ձորի ժամ»	9-13 դդ.	գյուղից 3 կմ հս-ան
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Գերեզմանոց	միջնադար	
Խաչքար	9-10 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	

Վանական համալիր Թեժառույթի վանք (Գյուրջիքիլիսա, Թուխ Մանուկ)	12-13 դդ.	գյուղից հվ, անտառապատ բարձունքին
Եկեղեցի	1196-1199 թթ.	
Տապանաքար Բուբա իշխանի	13 դ.	Եկեղեցու ներսում
Գավիթ-նախամուտք	12-13 դդ.	կից է եկեղեցուն ամ-ից
Մատուռ-նախամուտք	12-13 դդ.	կից է եկեղեցուն հվ-ից
Մատուռ	12-13 դդ.	Եկեղեցուց 10 մ հվ

Պատմության, մշակույթի հուշարձանների հողերի և հայցվող տարածքի միջև նվազագույն հեռավորությունը կազմում է 4,96կմ:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող տեխնածին ճնշումների նկարագիրը ներկայացված է ստորև:

Մթնոլորտային օդ.

Հետախուզման աշխատանքների ընթացքում փոշու և վնասակար գազերի արտանետումները կապված կլինեն հորատման, բնամասում օգտակար հանածոյի ուսումնասիրության և ավտոտրանսպորտի շարժման հետ:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշման՝ սահմանային թույլատրելի խտություններն (ՄԹԿ) ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի համար համապատասխանաբար կազմում է 5մգ/մ^3 , 0.2մգ/մ^3 , 0.15մգ/մ^3 և 0.5մգ/մ^3 :

Նախնական հաշվարկներին համաձայն, երևակյան տարածքում ծրագրավորված աշխատանքների իրականացման ժամանակ վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային և գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հողային ծածկույթ.

Երևակյան տարածքում հողաբուսական շերտը բացակայում է:

Աշխատանքների ժամանակ նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու են բարվոք վիճակում գտնվող դաշտամիջյան ճանապարհները: Չեն կառուցվելու նաև հորատման հրապարակներ, քանի որ տեղամասին բնորոշ է հարթ ռելիեֆ:

Բուսական և կենդանական աշխարհ.

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա

աննշան է, քանի որ ընդհանուր առմամբ տեղամասի տարածաշրջանը հանդիսանում է քաղաքաշինորեն-տնտեսապես ինտենսիվ յուրացված գոտի: Հողի բերրի շերտը բացակայում է, ինչը պատճառով է տարածքը գրեթե զուրկ է բուսածածկույթից: Երևակման արևելյան ծայրամասում առկա են մասրենու թփեր: ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ նախնական զննության արդյունքներով չեն հայտնաբերվել:

Հետախուզական աշխատանքների ընթացքում փոշու և ծխագազերի արտանետումները լինելու են խիստ սահմանափակ, հետևաբար երևակմանը հարակից տարածքների բուսական և կենդանական աշխարհի վրա նոր բացասական ազդեցությունների դրսևորման հավանականությանը գրեթե զրոյական է:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր.

Երևակման տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: ԲՀՊ տարածքներ չկան նաև հարակից Մեղրաձոր համայնքի տարածքում: Համաձայն ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գիրքերի տվյալների՝ հայցվող տեղամասում չեն արձանագրվել հատուկ պահպանվող բույսերի կամ կենանիների աճելա- և ապրելավայրեր: Հետևաբար, ծրագրավորվող աշխատանքները որևիցե կերպ չեն ազդելու վտանգված էկոհամակարգերի վրա:

Պատմության և մշակութային հուշարձաններ

Մոտակա պատմամշակութային հուշարձանը գտվում է հայցվող երևակման տարածքից մոտ 2.0կմ հեռավորության վրա: Երկրաբանահետախուզական աշխատանքների մեթոդաբանությունը բացառում է պայթեցման աշխատանքների կիրառումը, տեխնածին ցնցումներ չեն առաջանալու:

Թափոնների գոյացում.

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում առաջանալու է 4 տեսակի թափոն.

1) Մակաբացման ապարների թափոններ, որոնք ներկայացված են դելյուվիալ առաջացումներով:

Նկարագրված ապարներն իներտ են, ոչ վտանգավոր, չեն ենթարկվում էական ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական վերափոխումների ու, հետևաբար, շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա ազդեցություն չեն ունենալու:

2) Հորատման թագիկների թափոններ, որոնք առաջանում են հորատման ընթացքում թագազլիկների կարծր համաձուլվածքային հատվածի մաշվելու արդյունքում:

Հորատման թագիկների թափոնները բարձր ամրությամբ օժտված պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են:

ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ. №430-Ն հրամանի հավելվածի ցանկում հորատման արդյունքում առաջացած հորատման թագիկների թափոններ հաշվառված չեն:

Հորատումը ու դրա հետ փոխկապակցված բոլոր աշխատանքներն իրականացվելու են մասնագիտացված կազմակերպության կողմից, պայմանագրային հիմունքներով, այդ իսկ պատճառով ընկերությունը հորատման թագիկների թափոնների կառավարում չի նախատեսում, քանի որ հորատող կազմակերպությունը աշխատանքների ավարտից հետո իր հետ կտեղափոխի առաջացած անպետք թագիկները:

3) Նավթամթերքների ու քսայուղերի մնացորդներ, որոնք օտաործվել են հորատման տեխնոլոգիական ցիկլում:

Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը կատարվելու է մոտակա բնակավայրերում: Դա կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ Օգտագործված տեխնիկական յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար: Վերամշակող ընկերության հետ պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ. №430-Ն հրամանի հավելվածի՝ քսայուղերը դասվում են վտանգավորության 4-րդ դասին, իսկ սպառողական հատկությունները կորցրած յուղերը՝ վտանգավորության 3-րդ դասին:

4) Կենցաղային աղբ: Այս տեսակին են պատկանու թուղթը, տեքստիլը, պլաստմասսան, տարատեսակ փաթեթավորման պարագաները, հեղուկների պահպանման համար նախատեսված տարաները, ռետինը, լավասնը, սինթետիկ այլ պոլիմերները, լվացող ու մաքրող նյութերը, ներկերը, որոնք բոլորն էլ արտագատում են մարդու և շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր և այլն:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ առաջացած թափոնները (հիմնականում սննդի մնացորդներ, թուղթ,

պլաստմասայե շեր) կտեղափոխվեն մոտակա աղբահավաք կետեր, որտեղից պարբերաբար համայնքի Կոմունալ ծառայության կողմից կտեղափոխվեն շրջանի աղբավայր: Հետևաբար, այս թափոնները շրջակա միջավայրի ու մարդկանց առողջության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու:

Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004՝ 0,12տ/տ:

Աղմուկ և թրթռումներ.

Աշխատանքների ընթացքում կիրառվող հորատման հաստոցը և մարդկանց ու բեռներ տեղափոխող մեքենան դառնալու են աղմուկի աղբյուր:

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում՝ 80դԲԱ:

Հետախուզման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

	Գործողություններ		
	Հորատում	Ավտոտրանսպորտ	Բնամասում ծավալային զանգվածի որոշման աշխատանքներ
Մթնոլորտային օդ	Ցածր կարճատև	Ցածր կարճատև	Ցածր կարճատև
Ջրեր	-	-	-
Հողեր	-	-	-
Կենսաբազմազանություն	Ցածր կարճատև	Ցածր կարճատև	Ցածր կարճատև
Հատուկ պահպանվող տարածքներ	-	-	-

Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-
Աղմուկ և թրթռում	Ցածր կարճատև	Ցածր կարճատև	-

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը կատարվելու է մոտակա բնակավայրերում: Դա կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով: Տրանսպորտային միջոցների ամենօրյա մեկանգամյա լիցքավորումը բավական է աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքները ավարտելու համար: Լրացուցիչ պահանջարկի դեպքում՝ որը համարյա բացառվում է, այն կապահովվի բեռնատար մեքենայով՝ հատուկ տարաներով :
- Օգտագործված տեխնիկական յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար: Վերամշակող ընկերության հետ պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո:
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր, որտեղից պարբերաբար Կոմունալ ծառայության կողմից տեղափոխվում են շրջանի աղբավայր: Հետևաբար այս թափոնները շրջակա միջավայրի և մարդկանց առաջնության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում, տեխնիկայի շահագործում միայն սարքին, նորմատիվային վիճակում :
- Փոշենստեցման նպատակով ջրցանում երևակման տարածքին մոտեցնող ճանապարհների երկայնքով: Ջրառը նախատեսվում է իրականացնել Թեժ գետից:

Ուսումնասիրության լիցենզիա ստանալուց հետո ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կղիմի լիազոր մարմին ստանալու համար Ջրօգտագործման թույլտվություն: Հորատումը կկատարվի հատուկ լուծույթների կիրառմամբ՝ փոշեգոյացումը նվազեցնելու/կրճատելու համար:

- Կեղտաջրերի հավաքում հորատի պ զուգարանում, որը աշխատանքների ավարտից դատարկում են հատուկ ծառայության ուժերով :
- Բնական մերկացումներից նմուշառման և բնամասում հումքի ծավալային զանգվածի ուսումնասիրության արդյունքում խախտված լանդշաֆտի Բարեկարգում, որի նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշմամբ սահմանված կարգով կհատկացվի 80,0հազ.դրամ: Բարեկարգման աշխատանքները կատարվելու են ձեռքով, առանց տեխնիկայի կիրառման, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին մասնակցող անձնակազմի կողմից:
- Առաջնորդվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:
 - Մոտակա ջրային ռեսուրսը դա Թեժ գետն է, որը հոսում է երկու առանձին տեղամասերի միջակայքով դեպի արևմուտք՝ չհատելով տեղամասերը, արևմտյան տեղամասից նվազագույն հեռավորությունը կազմում է շուրջ 250մ, իսկ արևելյան տեղամասից՝ 200մ: Ներկայացված հեռավորությունները /200մ և 250մ/ տիված է հայցվող տարածքի եզրագծից, իսկ նախատեսվող աշխատանքները գտնվում են նշվածից մի քանի անգամ հեռու, ուստի որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա բացառվում է:
- Բուսական աշխարհի ուսումնասիրությանն ու պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան: Երևակման տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով՝

1) առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր

գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

- 2) Ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը:

- Աղմուկի և թրթռումների վերահսկողություն: Մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում՝ 80դԲԱ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

- Անձնակազմի նախնական ուսուցում և հրահանգավորում բնապահանական օրենսդրության և տեխնիկային անվտանգության կանոնների վերաբերյալ :

- Հրդեհային անվտանգության կանոնների պահպանություն, տարածքում հրշիջման միջոցների առկայություն (բահեր, ավազ, տեխնիկական ջուր, կրակմարիչ):

Նախատեսվող բնապահպանական և տեխնիկական անվտանգության միջոցառումների հակիրճ նկարագիրը ներկայացված են նաև աղյուսակ 4-ում :

Աղյուսակ 4.

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոցառում	Մեղման հայտանիշ
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> - Աշխատողներն ապահովվում են Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) - Սարքավորումների շահագործում են ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում - Աշխատակիցները իրազեկվում են պաշտպանության հրահանգների վերաբերյալ 	<ul style="list-style-type: none"> - Ձևման ընթացքում սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ չեն արձանագրվել
2. Երկրաբանական ռաումնասիրության աշխատանքներ	Օղի աղտոտում փոշով և արտանետումներով	<ul style="list-style-type: none"> - Փոշեգոյացման կանխում - Աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում - Տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետում-ները 	<ul style="list-style-type: none"> - Ճանապարհների թրջում - Ձևման ընթացքում աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրում չի հայտնաբերվել - Ձևման ընթացքում տեխնիկան և մեքենաները շահագործվել են առանց հավելյալ արտանետումների - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
	Աղմուկ	<ul style="list-style-type: none"> - Մահմանված աշխատանքային ժամերի պահպանում - Գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ ուժային մեխանիկական սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում - Աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա - Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով - Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների անջատում 	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել - Ձննման ընթացքում սարքավորումները եղել են բավարար տեխնիկական վիճակում - Ձննման ընթացքում միացված չօգտագործվող սարքավորումներ չեն հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել
	Բուսական աշխարհ	<ul style="list-style-type: none"> - Տարածքի բարեկարգում, աղբի և թափոնների մաքրում, - Վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություն (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ): 	<ul style="list-style-type: none"> - Դաշտային հետազոտությունների տվյալների առկայություն հաշվետվության կազմման համար

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
	Կենդանական աշխարհ	<ul style="list-style-type: none"> - Աղմուկի սահմանված մակարդակի վերահսկում - Անձնակազմի ուսուցում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ 	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել - Հազվագյուտ տեսակների վրա բացասական ազդեցությունների կանխարգելում - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել
3. Ընդերքօգտագործման թափոնների գոյացում	<ul style="list-style-type: none"> - Նավթամթերքի և օգտագործված քայտուղերի տեղափոխում և հանձնում մասնագիտական կազմակերպություններին վերամշակման համար 	<ul style="list-style-type: none"> - Կնքել պայմանագրեր վերամշակում իրականացնող ընկերությունների հետ 	<ul style="list-style-type: none"> - Բացառվել է ընդերքօգտագործման թափոնների կուտակումը

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների վերահսկման և մշտադիտարկումների կետերի տեղաբաշխման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 10-ում : Մշտադիտարկման տեսակները և պարբերականությունը ընտրվել են ՀՀ կառավարության «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն: Երևակման տարածքում ընկերությունը երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդում փոշու և ծխագազերի մոնիթորինգ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,

- նավթամթերքներով երևակման տարածքի հողերի աղտոտվածության մշտադիտարկում,
- տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է երևակմանը հարակից տարածքներում):

Տեղամասում կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժակալ կապ), որով հնարավոր է կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ:

Երևակման տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

- երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ երևակումը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում,
- հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ:

Երևակման տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատակիցները իրազեկվում են սեյսմիկ անվտանգության կանոնների և երկրաշարժի ժամանակ վարքագծի վերաբերյալ,
- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Մշտադիտարկումների համար նախատեսվում է տարեկան 100000 ՀՀ դրամ, իսկ բնապահպանական միջոցառումների համար՝ 150000 ՀՀ դրամ:


**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականություն
				J

				ունը
Մթնոլորտային օդ	Փորձնական բացահայտի տարածք, ճանապարհներ,	- հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություններ, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	Փորձնական բացահայտի տարածք, ճանապարհներ	- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), -- հողերում	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություններ, չափումներ ավտոմատ չափման սարքերով	- տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ

		նավթամթերքների պարունակությունը		
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	ընդերքօգտագործման տարածքին հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	տարեկան մեկնագամ

Մշտադիտարկման կետերի տեղաբաշխման սխեմատիկ քարտեզ
ԵՐԿՐԱԲԱՆԱԳՆԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՀԱՅՑԿՈՂ ՏԱՐԱԾՔ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- մթնոլորտային օդի և հողային ծածկույթի մշտադիտարկումների կետ
- տարածքի կենսաբազմազանության կետ

Նախահաշիվ

ՀՀ Կոտայքի մարզի Քեժասար հանքավայրի Քեժազետերաֆաֆի նեֆելինային սիենիտների հանքաքարի պաշարների վերագնահատման անհրաժեշտ ու սու մնափորու թյ ան 2022-2025թ. Ծրագրով նախատեսված երկրաբանահետազոտական աշխատանքների

հհ	Ծրագրով նախատեսված աշխատանքները	Չափի միավորը	Ֆիզիկական ծավալներ	Ծավալը մուտավոր արտահայտված և դրամ	2022										2023			2024			2022-2025			Ծանոթություն
					Եռամսյակներ		Եռամսյակներ				Եռամսյակներ				2022-2025									
					III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	Ընդամենը գու մարային արտահայտված ՀՀ դրամ						
					6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18		19					
1	Ու սու մնափորու թյ ան ծրագրի կազմում / տեքստային մաս, նախնական հայտ գրաֆիկա	միլիոն. Դրամ	4,5	4,5	4,5																4,5			
2	Նափկինու մանցած ճանապարհների մաքրում և հորատորապարակների բացում	խոր. Մ	1000	5	300/1.5	500/2.5				200/1.0												5		
3	Տարածքի գեոդեզիական հանույթ ՄԸ:2000	հա	91,74	2,5		48/1.0	43.74/1.5															2,5		
4	Տարածքի երկրաբանական հանույթ ՄԸ:2000	հա	91,74	4,5		18/1.0	26/1.5	13/0.5		24.7/4.0	10/0.5											4,5		
5	Նափկինու մանցած մաքրումային հետազոտության վերականգնում	գծ.մ/խոր. մ	3000/1500	7,5		300/1.0	1000/3.2	200/0.8		800/1.0	700/1.5											7,5		
6	Նափկինու մանցած մակերևույթային շուրջերի վերականգնում	գծ.մ/խոր. մ	19/23.75	0,5		6/0.2	13/0.3															0,5		
7	Մակերևույթից նոր շուրջերի անցում	գծ.մ/խոր. մ	15/18.75	3		3/0.2	7/0.4			3/0.7	2/0.7			0,5	0,5							3		

8	Հորատանցքերի հորատում	զծ.մ	2010	120,6			2010/ 120.6											120,6
9	Տեխնոլոգիական նմուշի համար փորձնական համույթ տրանզեաների անցումով	խոր. մ/տ	200/500	3,5					200/ 0.5	300/ 1.5			1,5					3,5
10	Բոլոր սեսայի փորվածքների նմուշ սրվում	հատ	1321	5,5	100/0.5		205/1 .0	135/ 0.5	235/ 1.0	235/ 1.0	185/ 0.75	85 /0. 25	135/ 0.5					5,5
11	Նմուշների մշակում	հատ	1321	3,5			120/0 .3	225/ 0.6	12 5/ 0.3	125/ 0.3	225/ 0.6	235/ 0.6	12 5/ 0.3	130/ 0.5				3,5
12	Նմուշների 1 սերտառոր ու սու մնասիրություններ պլուս ներքին և արտաքին հսկողություններ	հատ	1321	20				120/ 1.3	22 5/ 2.5	225/ 2.5	225/ 2.5	125/ 1.2	12 5/ 2.5	335/ 3.5	325/4. 0			20
13	Հանքաքարի վերամշակման և կորզման տեխնոլոգիայի մշակմանը անհրաժեշտ լսարատոր ու սու մնասիրություններ	հսգ. դրամ	498	15						2	2	2	2	3,5	3,5			15
14	Ուսումնասիրություններ անհրաժեշտ փորվածքների անցում միջ հետ ռեկուլսիվացիոն աշխատանքներ	խմ/ քառ. մ	1842.5/2 341.0	5,5				1	1			1	2,5					5,5
15	Հանքաքարի վերամշակման և կորզման տեխնոլոգիայի մշակմանը անհրաժեշտ կիսագործարանային ու սու մնասիրություններ	հսգ. դրամ	2	5										2,5	2,5			5
16	Կոնդիցիոնների կազմում վերանայված կոնդիցենսատների ընդերքային փորձաքննություններ	հսգ. դրամ	1 գիրք	10										4	6			10
17	ՏՏՁ և պաշտպանների հաշվարկով հաշվետվություն կազմում	հսգ. դրամ	1 գիրք	15										4	6	5		15

18	Հնդերքսբանական փորձաքննու թղ ու նների արդյ ու նքներով կազմված պաշարների միտմյան լ իսգոր մարմիններու մ հաստատու մ																պաշա րներ ի հաստ ատու մ		
	Հնդաներ			231,1	6	6,4	128,8	4,7	3,8	10	10,3	5,55	7,5 5	20,5	22,5	5		231,1	

Գրականություն

1. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
2. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
3. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
5. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
6. ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայք